

634

1h-73

ՅԵ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՎԱՋԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ



Առաջաբան	3
I. ԳԱՂԱՓԱՐ ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ՄԱՍԻՆ	5
1. Սեռական բազմացում	5
2. Անսեռ կամ վեգետատիվ բազմացում	6
II. ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ	12
1. Կտրոնների տեսակները	12
2. » աբնատակալման պայմանները	15
3. » յերկարությունը	16
4. » պատրաստման (վերցնելու) ժամանակը	17
5. » ընտրությունը	17
ա) փոփոխականների ընտրությունը	18
բ) վազիների ընտրությունն ու պիտակալորումը	21
գ) մասերի ընտրությունը և կտրոններ պատրաստելը	24
6. Կտրոնների պահելն ու փոխադրելը	26
7. » պիտանիությունը, վորոշելու յեղանակը	31
8. » նախապատրաստումը տնկելուց առաջ	32
9. Կտրոններ տնկելու հարմար ժամանակը	39
10. Կտրոնները տնկելու տեղը	40
III. ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԽՆԱՄԻՐ	44
1. Տնդի ընտրությունը	44
2. Տնկարանի տերիտորիայի կազմակերպումը	45
3. Հողի նախապատրաստությունը	47
4. Տնկելու խորությունը	49
5. Տնկելու խտությունը	50
6. Տնկելու տեխնիկան	51
7. Տնկարանի խնամքը	54
8. Տնկիների հանելը, տեսակալորելն ու պահելը	55

634
Ա-43

ՅԵ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ



Նայված է Դաւադատութեան Ինստիտուտի
Այգեգործական Ամբիոնի կողմէց.



35954.62

Պատ. խմբագիր՝ Ս. Կիրակոսյան
Մրցադրել է. Այվազյան
Մեկ. տպ. թերթում 107,320 տպ. նշ.
Հանձնվել է արտադրության 1934 թ. ապրիլի 13-ին, ստորագրված է տպագրե-
լու 1934 թ. մայիսի 5-ին: Դրավիտ № 212: Պատվիր № 297: Տիրաժ 2500

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԱՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՏԱՆ, 50

ԱՌԱՋԱԲԱՆ

Կոմունիստական կուսակցության 17-րդ համագումարը՝ արձանագրե-
լով մեր յերկրի սոցիալիստական շինարարության ասպարիզում բանվոր
դասակարգի ձեռք բերած հսկայական հաջողությունները, վորոնք արդունք
են մասնավորապես առաջին հնգամյակի՝ կուսակցության ու բանվոր դա-
սակարգի ընդհանուր ճակատով հարձակմանը, յերկրորդ հնգամյակի—ան-
դասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման գործն ավարտե-
լու համար, նորանոր խնդիրներ առաջադրեց կուսակցությանն ու յերկրի
վորջ աշխատավորությանը:

Ձեռք բերված հաջողությունները հետևանք են նաև դասակարգային
թշնամու հիմնովին ջախջախմանը. կուլակը ջախջախված է վորպես դասա-
կարգ, բայց դեռևս հիմնովին չի վերացված:

Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, վոր
պետք է վերացնել դասակարգեր ծնող տնտեսական պատճառները և վերա-
վորել մարդկանց գիտակցությունը: Մեր յերկրի ինդուստրացման հետևան-
քով նախկին հետամնաց նահապետական ագրարային յերկրը դարձել է
ինդուստրիալ ագրարային յերկիր. մեքենայացվում են վորջ գյուղատնտեսա-
կան աշխատանքները, վերանում է հետդհետե այն տարբերությունը, վորը
մնացել է կապիտալիստական հասարակությունից՝ գյուղի ու
քաղաքի միջև: Արդյունաբերության դարգացման ու գյուղատնտեսու-
թյան մեքենայացման զուգընթաց որեց-որ աճում են մեր բանվորության ու կու-
տնտեսականների տնտեսական պահանջները. մասնավորապես բանվորական
մատակարարման գործն ավելի բարձր մակարդակի վրա հասցնելու խնդիրը
լուրջ պահանջ է դնում, ինչպես գյուղատնտեսության բոլոր հյուղերի,
նույնպես և այգեգործության առաջ: Բերքատվության բարձրացումն այսոր-
վա քաղաքական խոշոր նշանակություն ունեցող խնդիրներից մեկն է և
վորի վրա կուսակցությունն ու խորհրդային որդանները չափազանց լուրջ
ուշադրություն են դարձնում:

Գյուղատնտեսության վերակազմակերպումը մոտենում է իր վախճա-
նին և բերքատվության բարձրացման հարցը դառնում է գյուղատնտեսու-
թյան վերելքի հիմնական հարցերից մեկը (Ստալին): Կուսակցության ու
բանվոր դասակարգի հանձարեղ առաջնորդի ասածները 17-րդ համագումա-
րում արդեն դարձել են միլիոնավոր մասսաների համար աշխատանքի ու
պայքարի լողունգներ:

Մենք ապրում ենք պատմական այնպիսի մի ժամանակաշրջանում,
յիրը «տեխնիկան վճռում է ամեն ինչ». տեխնիկայի տիրապետման գործը
վճռական նշանակություն է ստանում թե արդյունաբերության և թե գյու-
ղատնտեսության ասպարիզում:

Այգեգործությունը խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության
կուլտուրական մշակույթների թվում խոշոր տեղ է բռնում, վորն է թիվս
այլ կուլտուրաների ընդարձակվել ու ընդարձակվում է:

Այդեգործութեան հետագա արագ զարգացմանը զարկ են տալու մեր ջրաշինարարութեան ու վոռողման այն ծավալուն աշխատանքները, վորոնք սկսվել են մեզ մոտ: Յեղկորդ հնգամյակում՝ միայն նոր հողերի յուրացման ճանապարհով, 18 հազար հեկտար նոր հողեր պետք է հատկացվեն պողատու ծառերի և խաղողի այգիների համար: Այս հանգամանքն ավելի քան լուրջ խնդիր է դնում մեր կուլտեստեսութունների և խորհտեստեսութունների առաջ, մասնավորապես այդեգործութեան վաղերի բաղմացման բնագավառում, տիրապետել այդեգործութեան մշակութային կուլտուրական ձեւերին: Մանապէս հեղինակը նպատակ է դրել այս աշխատութեանում ոգնել մեր այդեգործութեան զարգացմանն ու մշակութեան գիտական նոր ձեւերի տարածմանը:

I. ԳԱՂԱՓԱՐ ՎԱՁԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղը կարելի է բաղմացնել սեռական և անսեռ (վեգետատիվ) յեղանակով: Առաջին դեպքում բաղմացումը կատարում են սերմերով (կորիզներով, յերկրորդ դեպքում—կտրոնների (մատերի), անդալիսի և պատվաստի միջոցով: Բաղմացման այդ յեղանակները գործնական այդեգործութեան համար չունեն միևնույն արժեքն ու նշանակութունը: Բաղմացման այս կամ այն յեղանակի կիրառումը կախված է՝ կամ վաղի մշակութեան պայմաններից, կամ եւ այն նպատակից, վորը տվյալ դեպքում հետապնդում է տեսեստեսութունը:

1. ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ

Բաղմացման այս յեղանակը գործնական այդեգործութեան մեջ չի կիրառվում, վորովհետեւ սերմից չենք ստանում այն խաղողի փոփոխակը, վորը ցանկանում ենք բաղմացնել: Այսպես, յեթե մենք խաղողի բաղմացնենք սերմերով, ապա չգիտենք թե ինչպիսի նոր փոփոխակ կստանանք և այդ փոփոխակն ինչ հատկութեւններ կունենա ու ինչ վորակի խաղող կտա: Ընդհանրապես նկատված է, վոր սերմերից առաջացած վազերը համեմատաբար ուշ են պտղաբերում և վատ վորակի բերք են տալիս: Նրանց խաղողի գիւլաները կոպիտ են, մանր, նյութով աղքատ և ունեն անդուրեկան համ: Սակայն սերմերից ստացված վազերի թվում պատահում են և այնպիսի վազեր, վորոնք ունենում են մի շարք կարեւոր և մշակութեան համար արժեքավոր հատկութեւններ (Ֆիլոքսերային գիւլացկութեւնութեւնը, բերքի վորակը և այլն): Այս դեպքում առանձնացնում են այդ վազերը և բաղմացնում վեգետատիվ յեղանակով: Այսպիսով ստանում են թանկարժեք նոր փոփոխակ: Ուրեմն, վաղը սերմերով բաղմացնելիս՝ մենք ստանում ենք նոր փոփոխակներ. հենց այդ պատճառով եւ սերմերով բաղմացումը կիրառում են այն դեպքում միայն, յերբ ցանկանում են խաղողի նոր փոփոխակներ ստանալ: Սերմերից նոր փոփոխակներ ստանալու համար սովորաբար կիրառում են արհեստական, խաչաձեւ փոշոտում, կամ, ինչպես ասում են, հիբրիդիզացիա, այսինքն՝ մեկ փոփոխակի ծաղիկները փոշոտում են մի այլ փոփոխակի ծաղկավոշով և ստացված սերմերն ոգտագործում ցանելու համար: Այդ սերմերից ստացված վազերը կոչվում են հիբրիդներ: Սեռական բաղմացման միջոցով (հիբրիդիզացիայի մեթոդով) ստացված են խաղողի հազարավոր նոր փոփոխակներ (հիբրիդներ), վորոնք մշակվում են գլխավորապես Ֆիլոքսերայով վարակված շրջաններում, կամ վորպես պատվաստակալներ, կամ եւ վորպես անմիջական արտադրողներ:*) Սեռական բաղմացման յեղանակը կիրառվում է զլխավորապես գիտահետազոտական և փորձնական նպատակներով զցած տնկարաններում ու այգիներում:

*) Անմիջական արտադրող անվանում են վազի այն տեսակը (հիբրիդը), վորը Ֆիլոքսերայով վարակված տեղում, առանց նրա վրա պատվաստ անելու, կարող է տալ թարմ դրածութեւն կամ վերամշակման համար պիտանի խաղող: Նրանք ստացվել և ստացվում են ամերիկական տեսակների և յեվրոպական փոփոխակների հիբրիդիզացիայի միջոցով:

2. ԱՆՍԵՆ ԿԱՍ ՎԵԳԵՏԱՑԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ

Սնուական բազմացման հետ համեմատած՝ վեգետատիվ բազմացման յեղանակը գործնական ալգորիթմի համար ունի խոշոր առավելություններ։ Նախ, վոր վեգետատիվ բազմացման միջոցով մենք ստանում ենք այն խաղողի փոփոխակը, վորը ցանկանում ենք բազմացնել։ Այսպես, յեթե խաղողին բազմացնենք կտրոնների կամ անդալիսի, կամ ել պատվաստի միջոցով, հիմնականում նորից խաղողի յինք ստանում, այլ վնչ թե ուրիշ փոփոխակ։ Բացի դրանից, վեգետատիվ բազմացման միջոցով տնկված այգիները շուտ են սկսում պտղաբերել։ Այդ առավելությունները հիման վրա յե, վոր գործնականում վաղը բազմացնում են միայն վեգետատիվ յեղանակով։ Սույն գրքույկի հիմնական նպատակն է ընթերցողներին ծանոթացնել վաղը կտրոնների միջոցով բազմացնելու ձևերին, իսկ այժմ մի փոքր կանգ առնենք անդալիսի և պատվաստի վրա։

ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ԱՆԳԱԼԻՍԻ ՄԻՋՈՑՈՎ

Անդալիս անիլը վաղերի բազմացման այն ձևն է, յերբ ցանկացած վաղի մեկ, կամ մի քանի կանոնավոր զարգացած մատերը, առանց վաղից անջատելու, պատկեցնում են հողի մեջ և մի յերկու աչք հողից դուրս թողնելով, մատերի վրա ուժեղ արմատներ և լավ շիվեր առաջացնում։ Անդալիս արած մատերը հեշտ և հաջողությամբ արմատակալում են և լավ զարգանում այն պարզ պատճառով, վոր նրանք սնունդ են ստանում վնչ միայն իրենց որգաններից, այլև մայր վաղից։ Վաղն անդալիսի միջոցով բազմացնում են հետևյալ նպատակներով՝


1. այգու շարքերի մեջ յեղած բաց տեղերը լրացնելու համար.
2. այգին խտացնելու համար.
3. վաղերը յերիտասարդացնելու, ինչպիսի և ցրտահարված, անպետքացած վաղերը փոխարինելու համար.
4. մեկ փոփոխակը մյուս փոփոխակով փոխարինելու համար.
5. դժվարությամբ արմատակալող փոփոխակներն ու տեսակները, ինչպես՝ որինակ, ամերկական վիտիս բերլանդիերի տեսակը, բազմացնելու համար.
6. արմատակալած մատեր ստանալու և նրանց մի նոր տեղ տնկելու համար.

Անդալիս անիլը վաղերը բազմացնելու մի ոժանդակ ձև է հանդիսանում, քանի վոր, համալրյա վնչ մի տեղ անդալիսի միջոցով նոր այգիներ չեն գցում։ Անդալիս անում են թե աշնանը և թե գարնանը։ Յան անդալիս անելու տարբեր ձևեր. նայած նրան, թե ինչ նպատակի համար են անդալիս անում, ըստ այնմ ել կիրառում են այս կամ այն ձևը։ Հիշենք անդալիսի ամենատարածված ձևերը։

Հասարակ կամ պարզ անդալիս.—Մայր վաղի բնից սկսած մինչև ցանկացած տեղը փորում են 35—60 սմ. խորությամբ և 30—40 սմ. լայնությամբ առու։ Վաղի բնի մոտ գտնված ամենալավ և յերկար մատերից մեկն զգուշությամբ կտանում են և պատկեցնում առվի մեջ, ծայրն ուղղելով դեպի վեր, առուն հողով ծածկում։ Հողից դուրս 2 աչք թողնելով՝ մատի ծայրի մոտ տնկած ցցից կապում են (տես նկ. 1)։ Այնուհետև մատի հիմքի

աչքերը, սկսած վաղին միացած տեղից մինչև հողի մեջ մտած մասը, փչացնում են, վորպեսզի նրանք իղուր շիվեր չտան և չթուլացնեն անդալիս արած մատը։ Մեկ կամ յերկու տարուց հետո անդալիս արած մատը մայր վաղից անջատում են, վորից հետո նա աճում է ինքնուրույն կերպով։


Ձիմակաճ անդալիս.—Այս ձևը կիրառում են գլխավորապես հազվագյուտ կամ դժվարությամբ արմատակալող փոփոխակները բազմացնելու նպատակով։ Ձիմակաճ անդալիսն անում են հետևյալ ձևով. ցանկացած վաղից ընտրում են մի յերկար ու առողջ մատ։ Վաղի բնի մոտ 20—30 սմ. խորությամբ, 30—35 սմ. լայնությամբ և վորոշ յերկարությամբ (1—2 մետր և ավելի, նայած ընտրած մատի յերկարությանը) մի առու յեն փորում։ Ընտրած մատն ուղղում են առվի մեջ և մի քանի տեղից փայտե կարթերով (2—3) ամրացնում այնպես, վոր մատը մոտ 10—15 սմ. առվի յեզրից ցածր լինի։ Կարթերով ամրացնում են նրա համար, վորպեսզի անդալիս արած մատը հողի յերեսը դուրս չգա։ Այնուհետև առուն հողով լցնում են այնչափ, վոր մատը մոտ 5 սմ. ծածկված լինի հողի շերտով։ Մատի առվից դուրս գտնված մասի բոլոր աչքերը հեռացնում են։ Վորոշ ժամանակից հետո հողում գտնված աչքերից շիվեր են դուրս գալիս, և յերբ դրանք հասնում են 15—20 սմ.



Նկ. 1. Հասարակ անդալիս


յերկարության, առուն ամբողջապես լցնում պարարտ հողով։ Շիվերը հաճախ պտուղ են տալիս հենց նույն տարում (նկ. 2)։ Նույն տարվա աշնանը, կամ հաջորդ գարնանն անդալիս արած մատն զգուշությամբ հանում են և ստանում այնքան արմատակալած կտրոն, վորքան շիվ է զարգացել մատի վրա։ Այդ արմատակալածներն իրարից անջատում են և ցանկացած տեղը տնկում։

Տառաքաղ անդալիս (ամբողջ վաղով անդալիս).—Այս ձևը տարբերվում է անդալիսի մյուս ձևերից նրանով, վոր մի մատն անդալիս անելու փոխարեն թաղում են ամբողջ վաղը։ Տառաքաղ անդալիս անում են, յերբ ցանկանում են կամ վաղը նորոգել, կամ այգու բաց տեղերը լրացնել, կամ ել հարևան վաղը ցանկացած վաղով փոխարինել։ Ամբողջ վաղն անդալիս անելու համար, վաղի բնից սկսած վորոշ յերկարությամբ (նայած թե վորտեղ են ցանկանում նոր վաղ ստանալ) փորում են 40—60 սմ. խորությամբ և 35—50 սմ. լայնությամբ առու։ Այնուհետև այդ առուն վաղի տակ խորացնում են, մինչև վոր հնարավոր է լինում ամբողջ վաղը պատկեցնել առվի մեջ, առանց արմատներին աչքի ընկնող վնաս հասցնելու։ Վաղի վրա թողնում են ամենաառողջ, ուժեղ և յերկար մատերից 2—3-ը, իսկ մյուսները հեռացնում։ Թողած մատերը նույն առվի հատակով տանում են ցան-




Նկ. 2. Ձիմակաճ անդալիս

կացած տեղերը և ապա այդ տեղից ծայրերն ուղղելով դեպի վեր, հանում են հողից դուրս: Ընկնից հետո առուն հողով լցնում ու վտառքերով ամրացնում են (նկ. 3), հողից դուրս հանած մասերը 2—3 աչքի վրա ետում են և ցցերից կապում:



Նկ. 3ա. Տաշտաթաղ անդալիս (հին վաղ)

Մեղ մոտ անդալիսը շատ քիչ չափով են կիրառում, մինչդեռ մեր այգիները բաց տեղերը լրացնելու, ինչպես և անպետքացած վաղերը նորոգե-




Նկ. 3բ. Տաշտաթաղ անդալիս (յերիտասարդ վաղ)

լու համար դա պիտի համարել ամենալավ և գործնական միջոցը: Մեր այգեգործական շրջանների համար գործնական նշանակություն ունի թե հասարակ (պարզ) և թե ամբողջ վաղով անդալիսը (տաշտաթաղ անդալիս):

ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ՊԱՏՎԱՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

Վաղի բաղմացումը պատվաստի միջոցով կայանում է նրանում, վոր մեկ վաղի կամ նրա մի մասի վրա վորոշ ձևով միացնում են մի այլ վաղի մի փոքր մաս (աչք, կտրոն, շիվ), վորը սնվելով առաջինի արմատների միջոցով, տալիս է մեր ցանկացած խաղողը: Այն վաղը, կամ վաղի այն մա-

սը (կտրոն, բուն ալին), վորի վրա պատվաստում են, կոչվում է պատվաստակալ, իսկ այն մասը, վորը միացնում են կամ ինչպես ասում են՝ պատվաստում են, պատվաստացու յե կոչվում: Որինակ, յեթե հաջաբաշի վրա պատվաստենք մսխալին, ապա հաջաբաշը կկոչվի պատվաստակալ, մսխալին՝ պատվաստացու, իսկ ստացված վաղը՝ պատվաստ: Հին ժամանակներում պատվաստումն այգեգործության մեջ շատ քիչ չափով էր կիրառվում և վաղի վրա պատվաստ անելու կարիք չէր զգացվում: Սակայն դրուժուհի միանգամայն փոխվեց, յերբ Պրանսիայում 1863 թվին հայտաբերվեց ֆիլոքսերա կոչվող միջատը, վորը սոսկալի հարված հասցրեց Պրանսիայի այգեգործությանը, կարճ ժամանակամիջոցում (20 տարվա ընթացքում) վոչնչացնելով մոտ 2 միլիոն հեկտար խաղողի այգի: Պրանսիայից նա տարածվեց յեվրոպական մյուս յերկրները (Գերմանիայում 1874 թ., Իտալիայում 1879 թ., Հունգարիայում 1875 թ., Ավստրիայում 1872 թ. և այլն) և Ռուսաստան հասավ 1880 թ., իսկ Խորհ. Հայաստանում առաջին անգամ յերևաց՝ Բարանայի, Ալլահվերդու, Իջե-



Նկ. 4. Անգլիական պատվաստ

վանի և Շամշադինի շրջաններում 1925 թ.: Ահա հենց այդ ֆիլոքսերայի վտանգից այգիները պաշտպանելու համար մարդիկ լալն մասշտաբով սկսեցին կիրառել պատվաստ անելու գործը: Ուսումնասիրություններից պարզվեց, վոր ֆիլոքսերայի նկատմամբ խաղողի տարբեր տեսակներն ունեն տարբեր դիմացկունություն և, վոր դիմացկուն տեսակներն ամբրիկականներն են: Իսկ ամենաթույլ դիմացկունը՝ յեվրոպականն է, կամ, ինչպես ասում են, վիտիս վինիֆերա տեսակն է (այդ տեսակին են պատկանում նաև մեր տեղական խաղողի փոփոխակները): Սակայն ֆիլոքսերային դիմացկուն ամերիկական

տեսակները տալիս են շատ վատ վորակի բերք, մինչդեռ յնվորոպական տեսակը, վորն ինչպես ասացինք ֆիլոքսերային շատ թույլ և դիմանում, տալիս և ամենալավ վորակավոր խաղողը: Այստեղից պարզ յերևում և, վոր յեթե մենք յնվորոպական տեսակի վաղը (պտտվաստացու) պատվաստենք ֆիլոքսերային դիմացող վաղի վրա (ամերիկական տեսակները կամ նրանց հերերիդներն ոգտագործելով վորպես պատվաստակալ), ապա կստանանք մի



Նկ. 5. Լիանեղ պատվաստ

վաղ, վորը թե վորակավոր խաղող կտա և թե կդիմանա ֆիլոքսերային: Հիշելի, այդեգործական այն շրջաններում, վորտեղ ֆիլոքսերա կա, այգիները բազմացնում են համարյա միայն պատվաստի միջոցով, ինչպես որինակ Վրաստանում, Ուկրաինայում, արևմտյան մի շարք յերկրներում և այլն: Ուրեմն՝ գործնական այգեգործության մեջ պատվաստ անելու գլխավոր նպատակն և անփաստ պահել այգիները ֆիլոքսերային վտանգից: Բացի դրանից, պատվաստ անում են նաև հետևյալ նպատակներով.

1. այգիներում յեղած անբերրի կամ սակավտեր վաղերը ցանկացածներով փոխարինելու համար.

2. մի փոփոխակը մի ուրիշ լավ փոփոխակով փոխարինելու համար.

3. սերմերից առաջացած վաղերի (հերերիդներ) պտղաբերությունն արագացնելու համար, ոգտագործելով նրանք, վորպես պատվաստացուներ.

4. թանկարժեք և հազվագյուտ փոփոխակը կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ բազմացնելու համար:

Պատվաստը հաջողութամբ կաշխու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.


1. Թե պատվաստացուն և թե պատվաստակալը պիտի լինեն միանգամայն առողջ և պարունակեն բավարար քանակությամբ սննդարար նյութեր.

2. պատվաստացուն ու պատվաստակալը պիտի ունենան ազգակցական կապ, կամ ինչպես ասում են աֆֆինիտետ.

3. միջավայրը, վորտեղ պիտի պատվաստենք կաշին, ունենա բարենպաստ ջերմություն (25—30°), խոնավություն և ոդ.

4. պատվաստողը պատվաստը հաջող կատարելու համար պետք և պատվաստի գործիքներն ու մեքենաները սուր ու մաքուր լինեն: Կան պատվաստ անելու գանազան ձևեր: Դրանցից այգեգործության մեջ տարածված են—աղբիական պատվաստը (Նկ. 4, այս ձևն ամենատարածվածն է), լիանեղ պատվաստը (Նկ. 5) և հասարակ ճեղով պատվաստը (Նկ. 6). յերբեմն գործադրում են նաև կանաչ պատվաստ (աչքապատվաստ, կանաչ շիվով պատվաստ և այլն): Պատվաստն անում են կամ սեղանի վրա (սենյակներում), կամ ել տեղն սև տեղը (տնկարանում կամ հիմնական տեղում): Սեղանի վրա պատվաստ անելը տարածված է այն շրջաններում, վորտեղ ցանկանում են մեծ քանակությամբ պատվաստներ ստանալ ամերիկական պատվաստակալների վրա: Սեղանի վրա պատվաստ անելն ունի այն առավելությունը, վոր այս դեպքում ավելի հեշտ է ստեղծել պատվաստի համար բարենպաստ պայման-

ներ (ջերմություն, խոնավություն, ոդ և այլն), քան տեղն ու տեղը՝ բաց ոդում: Սեղանի վրա պատվաստ արածները դարձում են հատուկ արկղների մեջ (Նկ. 7), վորոշ ժամանակով (15—20 օր) պահում ջերմաստիճանում մինչև



Նկ. 6. Հասարակ ճեղով պատվաստ

պատվաստների կաշիք և դարձանք, յերբ ողի ու հողի ջերմությունը բավականաչափ բարձր է լինում, տեղափոխում են տնկարանը: Սեղանի վրա

պատվաստը կատարում են գլխավորապես աղբիական ձևով, թե սովորական կտրոնների և թե միամյա կամ յերբեմն յերկամյա արմատակալածների վրա: Պատվաստը

կատարում են թե ճեղքով (պատվաստի հատուկ դանակներով) և թե պատվաստի հատուկ մեքենաների միջոցով:

Տեղն ու տեղը պատվաստը կատարում են կամ արմատակալած կտրոնների վրա (տեղնկարանում) կամ ել հասակն առած վաղերի վրա: Մեղա-

նում պատվաստի միջոցով այգիներ բազմացնելն առայժմ տարածված չէ: (Արարատյան դաշտավայրի շրջաններում,

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):

Նկ. 7. Պատվաստման տրեղներ

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):



ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):

ինչպես վիայում են Ո. Բ. Վ-ի 1933 թվի կատարած հետազոտությունները, ֆիլոքսերա չի հայտնաբերված):



II. ՎԱՋԻ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ

Վազի բազմացումը կտրոնների միջոցով հայտնի յն շատ հին ժամանակներից և այգեգործության մեջ ամենից հեշտ ու տարածված ձևն է համարվում: Ֆիլոքսերայից ազատ շրջաններում նոր այգիները զցում են բացառապես կտրոնների միջոցով: Այդ նպատակով կտրոնները տնկում են կամ հիմնական տեղում (այգալես են անում և մեզ մոտ), կամ ել նախորդ տնկում են տնկարանում՝ արմատակալելու համար և ապա 1—2 տարուց հետո տեղափոխում հիմնական տեղը:

Կտրոնների միջոցով վազի բազմացումը կիրառում են նաև ֆիլոքսերայով վարակված շրջաններում: Այս դեպքում կտրոններն ոգտագործում են հետևյալ նպատակներով.

1. ամերիկական պատվաստակալներ բազմացնելու համար.
2. անմիջական արտադրողներ բազմացնելու համար.
3. պատվաստներ ստանալու համար.

Կտրոնների միջոցով բազմացման ձևը կայանում է նրանում, վոր ցանկացած վազերից կտրում են միավյա, լավ փայտացած ու առողջ մատերը (կտրոնները), տնկում հողի մեջ և նրանց վրա արմատներ ու շիվեր առաջացնելով, մի 3—4 տարուց հետո ցանկացած խաղողն ստանում:


1. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կտրոնները կարելի յն պատրաստել թե փայտացած միավյա մատերից (վազի հանգստի շրջանում) և թե աճող շիվերից (ամառվա ընթացքում): Առաջին դեպքում կտրոնը կոչվում է փայտացած, յերկրորդ դեպքում՝ կանաչ: Այգեգործության մեջ գործ են ածում միայն փայտացած կտրոններ, քանի վոր սովորական պայմաններում նրանք հեշտությամբ արմատակալում են և հաջողությամբ զարգանում, մինչդեռ կանաչ կտրոններով բազմացումը պահանջում է հատուկ խնամք և մեծ աշխատանք (Ջերմատուն, Ջերմոցներ և այլն): Բացդդյա (տնկարանում կամ այգում) տնկելիս՝ նրանց մեծ մասը չորանում է: Այդ պատճառով կանաչ կտրոններով բազմացումը կիրառում են շատ հազվագյուտ դեպքերում՝ որինակ՝ յերբ սուր կարիք է զգացվում կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ ամերիկական պատվաստակալներ ստանալ պատվաստ անելու համար: Այս դեպքում կանաչ կտրոնները բազմացում են միայն հատուկ Ջերմատներում կամ Ջերմոցներում, քանի վոր, ինչպես վերն ասացինք, նրանք բացդդյա պայմաններում հեշտութեամբ չորանում են և արմատներ չեն արձակում: Մենք կանգ կառնենք միայն փայտացած կտրոններով բազմացման յեղանակի վրա: Կտրոնների տեսակներից հայտնի յեն՝ պարզ կամ հասարակ կտրոն, կրնկակտրոն, դավադանակտրոն և աչքակտրոն:

Պարզ կամ հասարակ կտրոն, վորն իր վրա չունի յերկավյա բնափայտից և վոր մի կտուր (նկ. 8ա): Հասարակ կամ պարզ կտրոն պատրաստելու համար վազից ետում են ցանկացած մատը (սպառնովելով վազի

բերքը), հիմքում, աչքի տակ հարթ կտրում և տալով կտրոնին պահանջվող յերկարությունը (50—80 սմ. և ավելի, նայած տնկման խորությանը), մատի ծայրը հեռացնում են: Յերկար մատերից կարելի յն պատրաստել մի քանի կտրոն:

Կրնկակտրոնն իր վրա պահած ունի նախորդ տարվա մատից ունեցած մի փոքրիկ կտուր (յերկավյա բնափայտ) (նկ. 8գ): Կրնկակտրոն պատրաստելու համար միավյա մատը վազից կտրում են այնպես, վոր նրա հիմքում մնա նախորդ տարվա մատից մի փոքր մաս, այնուհետև մատի ծայրը ցանկացած տեղից հեռացնում են:



Նկ. 8. Կտրոնների տեսակները
ա. պարզ կամ հասարակ կտրոն, բ. դավադանակտրոն, գ. կրնկակտրոն, դ. աչքակտրոն



Նկ. 9. Արմատակալած աչքակտրոն (Գյուղինստիտուտ)

Գավազանակտրոնն ստում են այն կտրոնին, վորն իր ներքևի մասում ունի յերկավյա մատից ունեցած մի կտուր դավադանի կոթի ձևով (նկ. 8բ): Գավազանակտրոնի համար մատը պետի կտրել վազից յերկավյա մատի մի մասի հետ միասին, և տալով կտրոնին ցանկացած յերկարությունը, մատի ծայրի բարակ մասը հեռացնում են:

Այնպիսով մատի ամենափոքրիկ կտրոնն է, մի աչք վրան պահած: Մի մատից կարելի չէ ստանալ մի քանի աչքակտրոն (տես. նկ. 8դ և 9): Մատի բարակ ծայրը հեռացնում են և մնացած մասից ստանում այնքան աչքակտրոն, վորքան աչք կա նրա վրա:

Կտրոնների տեսակներից այդեզործության մեջ ներկայումս ամենատարածվածը հասարակ կամ պարզ կտրոնն է, վորը թե հեշտությամբ և արմատակալում և թե հարժար և շշերի ոգնությամբ տնկելու համար: Բացի դրանից, նույն այգուց հնարավոր և մեծ քանակությամբ հասարակ կտրոններ ստանալ և դրանց պատրաստելը քիչ աշխատանք և պահանջում: Ինչ վերաբերում է գավազանակտրոնների և կրնկակտրոնների կիրառմանը, ապա պիտի ասել՝ վոր դրանք ընդհանրապես այդեզործության մեջ տարածված չեն, վորովհետև ունեն մի շարք պակասություններ, այն է՝



Նկ. 10. Միամա արմատակալած հասարակ կտրոն (Դյուլիստիտում)

1. Նրանց վրա յեղած հին բնավայտը (յերկամյա փայտի կտորը) հողում հեշտությամբ քայքայվելով, յերեմն վարակում և կտրոնը:

2. շշերով տնկելու աշխատանքները դժվարանում են:

3. նույն այգուց այդ կտրոնները քիչ են ստացվում և դրանց պատրաստելը շատ աշխատանք և պահանջում:

Գավազանակտրոնի և կրնկակտրոնի միակ առավելութունն այն է, վոր հաջող են արմատակալում և վորի շնորհիվ նրանք հին ժամանակներում տարածված են յեղեր: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, վոր լավ

փայտացած հասարակ կամ պարզ կտրոնը նույնպիսի հաջողությամբ և արմատակալում (մանավանդ յեղրոպական փոփոխակները) և այդ տեսակներից գավազանակտրոնի և կրնկակտրոնի կիրառումն առանձին առավելութուն չունի:

Աչքակտրոններն այդեզործության մեջ ընդհանրապես տարածված չեն, վորովհետև նրանք բացողյա մշակության սովորական պայմաններում հեշտությամբ չորանում են և նրանց չնչին տոկոսն և զարգանում միայն: Այսպիսով, կտրոնների տեսակներից այդեզործության մեջ գործնական նշանակութուն ունի համարյա թե միայն հասարակ կամ պարզ կտրոնը:

2. ԿՏՐՈՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԿԱԼՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ինչպես ասացինք, հողում տնկած կտրոնները համապատասխան պայմաններում հեշտությամբ արմատակալում են և շիվեր արձակում: Արմատներն առաջանում են տնկած կտրոնների ստորերկրյա մասերի, իսկ շիվերը հողից դուրս կամ հողի յերեսին մոտ գտնված աչքերից: Արմատների առաջացման գործում կտրոնի բոլոր մասերը չունեն միևնույն նշանակութունը. արմատները դյուրությամբ են առաջանում և ուժեղ զարգանում հանգույցների վրա ու վերջիններիս մոտ մասերում, վորտեղ մեծ քանակությամբ սննդարար նյութեր են կուտակված: միջհանգույցների կենտրոնական մասերում արմատներ համարյա չեն առաջանում, կամ նրանք շատ թույլ են զարգանում (տես. նկ. 10): Կտրոնների արմատակալման համար անհրաժեշտ է՝ ջերմություն, խոնավություն և ոդ: Սառը և չոր պայմաններում (հողում) կտրոնները չեն արմատակալում: Յեթե հողը չոր է, ապա տնկած կտրոնները հաճախակի պիտի ջրել, վորպեսզի կտրոնները բավարար քանակությամբ ջուր ստանան և արմատներ արձակեն: Կտրոնները հաջող են արմատակալում փուխը հողերում, վորտեղ բավարար քանակությամբ ոդ կա և բացի դրանից փուխը հողերում մատաղ արմատները լավ են զարգանում: Բացի ջերմությունից, խոնավությունից և ոդից, կտրոնների արմատակալման համար անհրաժեշտ են նաև վորոշ քանակությամբ սննդարար նյութեր: Կտրոնների վրա թե արմատներն ու թե շիվերն առաջանում են և սկզբնական շրջանում զարգանում ի հաշիվ կտրոնների մեջ յեղած սննդարար նյութերի: Հետևապես, այն կտրոններն են հաջող արմատակալում, վորոնք պարունակում են բավարար քանակությամբ սննդանյութեր: Բացի դրանից, կտրոնները պիտի լավ փայտացած, առողջ ու թարմ լինեն, հակառակ դեպքում՝ նրանք կամ չեն արմատակալում, կամ ել շատ թույլ և անհաջող արմատներ են արձակում: Արմատակալման համար խոշոր նշանակութուն ունի նույնպես կտրոնացու մատի հասակը: Լավ և հաջողությամբ արմատակալում են միաշյա մատերից պատրաստված կտրոնները: յերկու յերեք տարեկան մատները դժվար են արմատակալում, իսկ հինգ տարեկանները՝ համարյա չեն արմատակալում: Արմատակալման հաջողությունը կախված է նաև կտրոնների աչքերի բացման ժամանակից: Յեթե տնկած կտրոնների աչքերը շատ վաղ են բացվում և շիվեր տալիս, քան արմատներն են առաջանում, ապա այս դեպքում կտրոններից շատերը չեն արմատակալում (չեն կալում)՝ այն պարզ պատճառով, վոր զարգացող շիվերը մեծ քանակությամբ ջուր են գոլորշիացնում, վորով կտրոնների մեջ յեղած ջրի քանակն զգալի չափով պակասում է: Կարճ ժա-

մանակից հետո կտրոնները, շիվերի հետ միասին, ջրի պակասութեան հետեւ-
վանքով, ամբողջապես չորանում են: Ուրեմն կտրոնները հաջորդութեամբ
կպչելու համար անհրաժեշտ է, վոր նրանց արմատները շուտ առաջանան,
իսկ աչքերը համեմատաբար ուշ բացվեն: Այդ նպատակով տնկելուց առաջ
կտրոնները վորոշ ձևով նախապատրաստում են (տես կտրոնների նախա-
պատրաստումը տնկելուց առաջ. եջ 32):

3. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենակարճ կտրոններն աչքակտրոններն են, վորոնք բացողյա, սովոր-
ական պայմաններում, ինպես ասացինք, դժվարութեամբ են արմատակա-
լում և վորոնց չնչին սոկոսն է միայն զարգանում, հետեւաբար կտրոնները
հաջորդութեամբ կպչելու և հետագայում կանոնավոր զարգանալու համար
պիտի ունենան վորոշ յերկարութեան: Այդ պատճառով ել տնկելու համար
սովորաբար գործ են ածում բազմաչքանի կտրոններ, վորոնց տալիք յերկա-
րութեանը կախված է կտրոնները տնկելու խորութեանից: Հետեւաբար, վոր-
քան կտրոնները խորն են տնկվելու, այնքան նրանք մեծ յերկարութեան պիտի
ունենան և, ընդհակառակը, վորչափ նրանք սաղր են տնկվելու, այնքան
նրանց յերկարութեանը համեմատաբար փոքր պիտի լինի: Ուրեմն անհրա-
ժեշտ է նախ պարզել կտրոնները տնկելու խորութեանը և ապա դրա հիման
ժեշտ է նախ պարզել կտրոնները տնկելու խորութեանը և ապա դրա հիման
վրա վորոշել՝ թե ինչ յերկարութեամբ կտրոններ պատրաստել: Ընդհանրա-
պես հարավային, չոր ու տաք կլիմայական ու հողային պայմաններում կըտ-
րոնները խորն են տնկում. հյուսիսային ցուրտ ու խոնավ պայմաններում՝
համեմատաբար սաղր են տնկում: Այս տեսակետից հարավային չոր ու տաք
շրջաններում գործ են ածում ավելի յերկար կտրոններ (70—80 սմ. և նույն-
նիսկ ավելի), քան հյուսիսային ցուրտ ու խոնավ շրջաններում, վորտեղ
կտրոններին տալիս են 30—35 սմ. յերկարութեան: Հարավային տաք ու չոր
կտրոններում կտրոնները հիմնական տեղում (այգում) ավելի խորն են տնկում
քան տնկարանում. հետեւաբար այդ շրջաններում հիմնական տեղը տնկելու
համար կտրոնները պիտի ունենան 15—25 սմ. ավելի յերկարութեան, քան
տնկարանում տնկելու դեպքում: Ինչ խորութեամբ ել տնկելու լինենք,
միևնույնն է, կտրոնը շիվեր արձակելու համար հողից դուրս մի 2—3 աչք
պիտի ունենա*), հետեւաբար նրա յերկարութեանը 10—20 սանտիմետրով
տնկման խորութեանից մեծ պիտի լինի: Յեթե դրա վրա ավելացնենք և այն,
վոր տնկելուց առաջ կտրոնների յերկարութեանը թարմացման հետեւանքով
5—10 սմ. պակասելու է, ապա կտրոնների ընտրութեան ժամանակ նրանց
տալիք յերկարութեանը տնկման խորութեանից 15—25 սանտիմետրով ավելի
պիտի լինի: Այսպես, որինակ, 50 սմ. խորութեան համար պիտի ընտրել
65—75 սմ. յերկարութեամբ կտրոններ, 30 սմ. խորութեան համար՝ 45—55
սմ. սանտիմետրանոց կտրոններ: Հյուսիսային ցուրտ ու խոնավ շրջաններում
յերեքեք կտրոնները տնկում են թեք կամ հորիզոնական դիրքով, այս դեպ-
քում, պարզ է, վոր կտրոններին տալիք յերկարութեանը համեմատաբար
մեծ պիտի լինի: Մեր այգեգործական տնտեսութեան յերկարութեանը հիմնական տեղում
տնկելու համար վերջնում են 65—80 սմ. յերկարութեամբ կտրոններ, իսկ

*) Կտրոնի հողից դուրս դուրսված մասը յերեքեք հողով ծածկում են, կամ, ինչպես
ասում են, բուկ են տալիս:

տնկարանում տնկելու համար՝ 45—60 սմ.: Կտրոններին տալիք յերկարու-
թեանը կախված է նաև փոփոխակի աճեցողութեանից: Յեթե տվյալ փոփո-
խակն ընդհանրապես թույլ աճեցողութեան ունի և նրա մատերն այնքան
կարճ են, (ինչպես, որինակ՝ Ղամաբլույի կարճ-մատ փոփոխակինը), վոր չեն
ապահովում կտրոնների պահանջվող յերկարութեանը, ապա, պարզ է, վոր,
այդ փոփոխակը սովորական կտրոններով բազմացնելու դեպքում, մենք հար-
կադրված ենք ոգտագործելու, վորպես բացառութեան, համեմատաբար կարճ
կտրոններ: Այս դեպքում կտրոնները պիտի տնկել միայն տնկարանում և
արմատակալելուց հետո հիմնական տեղը փոխադրել:

4. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ (ՎԵՐՑՆԵԼՈՒ) ԺԱՄԱՆԱԿԸ

Կտրոնները պատրաստում են վաղի հանգստի շրջանում, ընդհանրապես
այգիներն ետևելու ժամանակ: Այն շրջաններում, վորտեղ կլիմայական բարե-
նպաստ պայմանների շնորհիվ այգիները չեն թաղում, և ետը կատարում են
աշնանը կամ ձմռանը, կտրոնները պատրաստում են հինց այդ ետի ժամա-
նակ, այսինքն աշնան և ձմռան ընթացքում: Կտրոնների աշնան կամ ձմռան
պատրաստումն ունի մի շարք առավելութեաններ, նախ՝ հեշտանում է աշ-
խատանքի կազմակերպումը տնտեսութեան մեջ, յերկրորդ՝ թեթևանում են
գարնանը կատարվելիք աշխատանքները և յերրորդ՝ մեծ հնարավորութեան
ենք ունենում կտրոնները, հարկ յեղած դեպքում, ժամանակին հեռավոր վայ-
րեր տեղափոխելու: Այս տեսակետից այնտեղ, վորտեղ կլիմայական պայման-
ները նպաստավոր են, կտրոնների պատրաստելը պիտի սկսել հինց աշնանից,
տեղեւթափը վերջանալուց հետո: Սակայն այդ նույն վայրերում ձմռան
սառնամանիքային որերին կտրոնների պատրաստումը պիտի դադարեցնել:
Վնչ մի դեպքում տեղեւթափից առաջ կտրոններ չպիտի պատրաստել, վո-
րովհետեւ վաղի մատերն այդ շրջանում դեռ լրիվ փայտացած չեն և բավարար
չափով սննդաբար նյութեր չեն կուտակել, հետեւաբար դրանցից պատրաստ-
ված կտրոնները վորակով շատ ցածր են (տես մատերի ընտրութեանը եջ 24):
Այն շրջաններում, վորտեղ ձմռան խիստ սառնամանիքների հետեւանքով այ-
գիները թաղում են և կամ ետը կատարում են գարնանը, կտրոնների գար-
նան պատրաստումը պիտի սկսել, յերե որերը բավականաչափ տաքանում
են և յերե այգիների հողն այնքան է չորանում, վոր հնարավորութեան է
տալիս աշխատանք կատարելու: Համենայն դեպս, վորպես կանոն, բողբոջների
բացման ժամանակ, առավել ևս դրանից հետո, կտրոններ չպիտի պատրաս-
տել, հետեւաբար կտրոնների պատրաստման գործն այնպես պիտի կազմա-
կերպել, վոր մինչև բողբոջների բացվելը (աչքերի փնդելը), նա ամբողջովին
ավարտված լինի: Սորհրդ. Հայաստանի այգեգործական շրջաններում կտրոն-
ները պատրաստում են միայն գարնանը՝ ետի ժամանակ:

5. ԿՏՐՈՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կտրոնների ընտրութեան վրա հատուկ ուշադրութեան պիտի դարձնել:
Խաղողի ամեն մի փոփոխակ և փոփոխակի ամեն մի վաղ չի կարելի ողտա-
գործել բազմացման համար. յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է թե փո-
փոխակների և թե վաղերի խիստ ընտրութեան կատարել և մշակութեան

Վաղի բազմացումը կտր. միջոցով—2

արժանի վազերից միայն կտրոններ ընտրել տնկելու համար: Տնկվելիք այգիների կանոնավոր աճեցողություն, ինչպես և նրանց տաքացումը բերքատվություն զգալի չափով կախված է նրանից, թե ինչ կտրոններ են վերցնում բազմացնելու համար: Ազդրոտելիկական մյուս ձեռնարկումների կիրառման հետ միասին, ընտիր կտրոնները հիմնականում ապահովում են նորատունկ այգիների ապագա բարձր բերքատվությունը թե՛ վերակի և թե՛ քանակի տեսակետից: Կտրոններ ընտրելու համար անհրաժեշտ է նախորոշ պարզել, թե խաղողի վրձն փոփոխակներից պիտի կտրոններ հավաքել, այլ կերպ ասած՝ փոփոխակների ընտրություն կատարել: Փոփոխակներն ընտրելուց հետո պիտի վազերի ընտրություն կատարել և այդ վազերից միայն կտրոնացու մասեր ընտրել:

Ա. ՓՈՓՈԽԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղողի փոփոխակների կանոնավոր ընտրությունը բացառիկ նշանակություն ունի այգիների բերքատվության բարձրացման գործում: Անհատական մանր տնտեսության պայմաններում ամեն մի սեփականատեր այգեգործ աշխատում է իր տնտեսության մեջ ունենալ մեծ քանակությամբ փոփոխակներ: Նա շատ հաճախ այդ հարցին մոտենում է իրեն սիրող և յերբեմն մշակում այնպիսի փոփոխակներ, վերոնք իրենց հատկությունների հետևանքով արդյունաբերական նշանակությունից զուրկ են: Սոցիալիստական այգեգործական տնտեսություններում չի կարելի թույլ տալ փոփոխակների այդպիսի բազմապատկություն, այլ անհրաժեշտ է ընտրել յուրաքանչյուր այգեգործական շրջանի և նույնիսկ յուրաքանչյուր խորհ. կամ կոլ. տնտեսության համար սահմանափակ թվով փոփոխակներ, վերոնք տվյալ պայմաններում կարողանան ամենալավ արդյունքը տալ: Այս կամ այն շրջանի համար փոփոխակներ ընտրելիս, կամ ինչպես ասում են, շրջանային սորտիմենտ կազմելիս, պիտի հաշվի առնել հետևյալ պայմանները՝

1. տվյալ շրջանի բնական պայմանները, այսինքն՝ շրջանի կլիման, հողը, վտանգման պայմանները և այլն:

2. փոփոխակների աճեցողության և բերքատվության պայմանները, նրանց զիմացկունությունը, հիվանդություններին, վնասատուներին և բնական պառախարներին, բերքի վորակն ու քանակը, հասունացման շրջանը և այլն:

3. նրանց տնտեսական նշանակությունը:

4. փոփոխակների բազմացման հնարավորությունները, այսինքն՝ վորքան են նրանք տարածված մշակության մեջ և վորքան կտրոններ կարելի չեն նրանցից ունենալ բազմացման նպատակով:

5. շրջանի այգեգործության ուղղությունը: միևնույն փոփոխակները չեն մշակվելու այգեգործության տարբեր ուղղությունների դեպքում: Նայած թե խաղողի հյութ ենք պատրաստելու, թե գինի, կոնյակ, և այլն, խաղողը վերամշակության ենք յենթարկելու, թե թարմ դրություն ենք ապուխելու, ըստ այնմ պիտի մշակել տարբեր փոփոխակներ: Նույնը գինեգործության դեպքում — սեղանի գինի յենք պատրաստելու, թե թունդ կամ լիճյորային գինի, ըստ այնմ տարբեր փոփոխակներ ենք մշակելու:

Այս պայմաններից յեկելով Խ. Հայաստանի Հողօգտագործական առաջիկա տարիների համար ընդունել և հետևյալ շրջանային սորտիմենտը*):

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՂ- ՂՈՒԹՅՈՒՆԸ	Փ Ո Փ Ո Ւ Ք Ա Կ Ն Ե Ր Ը
	Ա. ս. ս. ա. ր. ա. կ.
Սեզոնային խաղող	1. Բիշմիշ, 2. Եղանդարի (սև և սպիտակ), 3. Խալիլի (սև և սպիտակ), 4. մախալի, 5. Խալիլի, 6. ասկյարի, 7. Իծապտուկ:
Պահուսի խաղող	1. Մախալի, 2. հաչաբաշ, 3. ալախի, 4. հալաղի, 5. շաֆեյ, 6. ալեքսանդրյան մուսկատ:
Գինի	1. Խալիլի, 2. ճիլար, 3. մուսկատ, 4. սեմիլիոն, 5. Ֆուրմիտ, 6. սերսիալ, 7. պեդրո-խիմենս, 8. վերդելո:
Խաղողի հյութ	1. Խալիլի, 2. ճիլար, 3. որդուցի (սպիտակ):

Վ. ա. դ. պ. ա. ս.

Սեզոնային խաղող	1. Մախալի, 2. Իծապտուկ, 3. Բիշմիշ, 4. Խալիլի, 5. Եղանդարի (սև և սպիտակ), 6. Խալիլի (սև և սպիտակ), 7. ասկյարի:
Պահուսի խաղող	1. հաչաբաշ, 2. շաֆեյ, 3. մախալի, 4. ալախի, 5. Թավրիզենի, 6. ալեքսանդրյան մուսկատ:
Կոնյակաբուսներ	1. Խալիլի, 2. ճիլար, 3. բանանց, 4. մախալի, 5. որդուցի:
Գինի	1. Խալիլի, 2. ճիլար, 3. մուսկատ, 4. սեմիլիոն, 5. Ֆուրմիտ, 6. սերսիալ, 7. պեդրո-խիմենս, 8. վերդելո, 9. ուլաժիթիլի:

Յ. Ե. Բ. Բ. Բ. Բ.

Սեզոնային խաղող	1. Խալիլի, 2. Իծապտուկ, 3. մախալի, 4. Եղանդարի (սև և սպիտակ), 5. Խալիլի (սև և սպիտակ), 6. ասկյարի, 7. Բիշմիշ:
Պահուսի խաղող	1. հաչաբաշ, 2. ալախի, 3. շաֆեյ, 4. Թավրիզենի:
Գինի	1. Խալիլի, 2. ճիլար, 3. մուսկատ:

Ղ. ա. մ. ա. ր. լ. ո. լ.

Սեզոնային խաղող	1. Մախալի, 2. Բիշմիշ, 3. Եղանդարի (սև և սպիտակ):
Պահուսի խաղող	1. հաչաբաշ, 2. շաֆեյ, 3. մախալի, 4. ալախի, 5. Բիշմիշ:
Կոնյակաբուսներ	1. Մախալի, 2. կախիթ:
Գինի	1. Կախիթ, 2. մախալի, 3. բանանց, 4. սեմիլիոն, 5. կաբեռնի:
Խաղողի հյութ	1. Կախիթ, 2. մախալի, 3. բանանց:

*) Այստեղ հաշվի չեն առնված Գոտայի, Ալավերդու, Իջևանի, Շամշադինի, Զանգեզուրի, Գորիսի և Ղափանի շրջանները, վորովհետև, ըստ Հողօգտագործական և Պետական վորոշման, այդ շրջաններում առաջիկ այգեգործությունը չի զարգանալու և նոր այգիներ չեն աճվելու: Յ. Ա.

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՂ- ՂՈՒՑՑՈՒՆԸ		Փ Ո Փ Ո Ւ Ա Կ Ն Ե Ր Ը
Վ Ե Ղ Ի		
Սեզոնային խաղող	1. Մսխալի, 2. իծապտուկ, 3. քիշմիշ, 4. ասկյարի, 5. խալիլի (սև և սպիտակ), 6. յեղանդարի (սև և սպիտակ):	
Պահուցի խաղող	1. Հաշաբաշ, 2. զաֆեյ, 3. մսխալի, 4. ալախկի, 5. զիրշիլու:	
Կոնցենտրատներ	1. Մսխալի, 2. կախեթ, 3. բանանց:	
Գինի	1. Մսխալի, 2. բանանց:	

Ղ Ո Ւ Ր Պ ՈՒ Ղ ՈՒ Լ Ի

Սեզոնային խաղող	1. Գառան դմակ, 2. մսխալի, 3. իծապտուկ, 4. քիշմիշ, յեղանդարի (սև և սպիտակ), 6. խալիլի (սև և սպիտակ):
Պահուցի խաղող	1. Հաշաբաշ, 2. ալախկի, 3. մսխալի, 4. զաֆեյ:
Խաղողի եյուր	1. Խարշի, 2. որդուցի, 3. գառան դմակ, 4. մսխալի, 5. բանանց:

Թ ա լ ի ն

Սեզոնային խաղող	1. Մսխալի, 2. իծապտուկ, 3. քիշմիշ, 4. խարշի, 5. ասկյարի:
Պահուցի խաղող	1. Հաշաբաշ, 2. ալախկի, 3. մսխալի, 4. զաֆեյ, 5. հալադի, 6. ալեքսանդրյան մուսկատ:
Կոնցենտրատներ	1. Շիլար, 2. խարշի, 3. որդուցի, 4. մսխալի:
Զամիշ	1. Քիշմիշ (խոշոր տեսակի), 2. ասկյարի, 3. իծապտուկ, 4. մսխալի, 5. ալեքսանդրյան մուսկատ:

Պ ա Ր ա լ ա զ յ ա զ

Սեզոնային խաղող	1. Ասկյարի, 2. մսխալի, 3. իծապտուկ, 4. քիշմիշ:
Պահուցի խաղող	1. Հաշաբաշ, 2. զաֆեյ, 3. մսխալի, 4. ալախկի:
Կոնցենտրատներ	1. Շիլար, 2. խարշի, 3. մսխալի:

Մ Ե Ղ Ի

Սեզոնային խաղող	1. իծապտուկ, 3. քիշմիշ:
Պահուցի խաղող	1. Շաֆեյ, 2. Թայֆեյի:
Գինի	1. Ալադուրա, 2. վերդելու:

Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր շրջանին ալած և այգեգործուկան կոնկրետ ուղղութիւն և յուրաքանչյուր ուղղութիւնը հատկացված են վորոշ թվով փոփոխական: Հետևապես փոփոխականներն ընտրելիս՝ մինք պիտի յերենք տվյալ շրջանի այգեգործութիւնն ուղղութիւնից և շրջանային

ստորաբաժանից: Այս տեսակետից ամեն մի խորհ. և կող. տնտեսութիւն, ստանալով վերադաս որդանների (հողբաժին, խորհ. տնտ. կենտրոն, ՄՏԿ և այլն) կողմից առաջադրված այգեգործութիւնն ուղղութիւնն ու զարգացման պլանը և հարմարեցնելով այն յուր պայմաններին, հաշվի յի առնում կտրոնները ձեռք բերելու հնարավորութիւնները և ապա դրա հիման վրա շրջանային սորտիմենտից փոփոխականների ընտրութիւն կատարում: Ինչ թվով փոփոխականներ պիտի ընտրի այգեգործական յուրաքանչյուր տնտեսութիւն: Իսկ կալած և թէ այգեգործութիւնն ուղղութիւնից և թէ փոփոխականները բազմացնելու հնարավորութիւնները: Յեթե այգեգործութիւնն ուղղութիւնը պահանջում է խաղողը վերամշակման լինթարկելու այս կամ այն պրոդուկտը (դինի, հյութ, կոնցենտրատ, չամիչ և այլն) ստանալու նպատակով, ապա համեմատաբար քիչ քանակութեամբ (3—4) փոփոխականներ պիտի մշակել, իսկ յետ խաղողն սպառելու յի թարմ դրութիւնը, ապա խաղող գործածելու ժամանակամիջոցը յերկարացնելու համար նպատակահարմար և փոփոխականների քանակը հասցնել 5—6-ի և նույնիսկ ավելի: Բայց հաշվի առնելով փոփոխականները բազմացնելու հնարավորութիւնները՝ տնտեսութիւնը հաճախ ստիպված է լինում ավելի մեծ թվով փոփոխականներ ընտրելու, քան ինքը՝ տնտեսութիւնը ցանկանում է բազմացնել: Այսպես, որինակ, տնտեսութիւն համար վաղահաս փոփոխականներից նպատակահարմար է, դիցուք, բազմացնել միայն յեղանդարին, բայց վորովհետև այդ փոփոխակը մեր այգիներում շատ քիչ քանակութեամբ է տարածված և նրանից պահանջվող քանակութեամբ կտրոններ չեն ստացվում, ապա վաղահաս խաղողի քանակն ապահովելու նպատակով, տնտեսութիւնն ստիպված է յեղանդարու հետ միասին ընտրել նաև խալիլին (թէ սպիտակը թէ սևը):

Համենայն դեպս, այգեգործական յուրաքանչյուր տնտեսութիւն պիտի աշխատի հնարավորութիւնն սահմաններում քիչ թվով փոփոխականներ բազմացնել և վնչ մի դեպքում տվյալ շրջանային սորտիմենտից դուրս փոփոխակ չընտրել: Փոփոխականների ընտրութիւնն հետ միասին անհրաժեշտ է կազմել նաև կտրոնների մթերման համար առանձին պլան *) և նախապատրաստական աշխատանքներ տանել տնկվելիք այգիները պահանջվող քանակութեամբ կտրոններով ապահովելու նպատակով: Ընտրած փոփոխականների ապահովումը պահանջում է, վոր դիտա-հետադրատական հիմնարկութիւնները ղեկավարութեամբ այգեգործական տնտեսութիւնները վազի վեգետացիոն շրջանում կատարեն այդ փոփոխականների պիտակավորում (յարլիկավորում) **): Իրա համար անհրաժեշտ է վազերի ընտրութիւնն կատարել:

Բ. ՎԱՋՏՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Վորքան ել փոփոխականները ճիշտ ընտրած լինենք, այնուամենայնիվ ընտրած փոփոխակի ամեն մի վազ չի կարող պիտանի համարվել բազմացման համար այն պարզ պատճառով, վոր յուրաքանչյուր փոփոխակի սահմանում պատահում են առանձին վազեր, վորոնք իրենց մի շարք վատ հատկութիւններ հետևանքով, միանգամայն անպիտք են բազմացման համար: Անշուշտ

*) Կտրոնների մթերման պլանը հաստատվում է համապատասխան վերադաս որդանների (հողբաժին, ՄՏԿ, խորհ. տնտ. կենտրոն և այլն) կողմից: Յե. Ա.

**) Հողթողկոմատի հանձնարարութեամբ փոփոխականների պիտակավորումը մեղանում դեկավորում է Այգեգործական Փորձական Գայանը (Յերեան): Յե. Ա.

նույն փոփոխակի բոլոր վաղերը, մշակութայն միևնույն պայմաններում ծն-
գամ, չունեն արդյունաբերական միևնույն նշանակություն ու արժեքը և
հաճախ իրարից տարբերվում են մի շարք, մշակութայն համար կարևոր հատ-
կություններով: Հիմնական մեծ աղբյուրներում յեղած բոլոր խարժիները միևնույն
խարժին չեն. անշուշտ նույն աղբյուր վորակավոր և բարձր բերքատվությամբ
խարժիների հետ միասին պատահում են նաև անբերրի կամ սակավաբեր
և վատ վորակի խարժիներ, վորոնք վողկույդները շատ փոքր են և պտուղ-
ները (գիլաները) յերեմնն այնքան մանր, վոր մեր պրակտիկ այգեգործները
այդպիսի խարժիներին «ծախ խաղող» են անվանում: Նմանապես նույն աղ-
բյուրում մենք կարող ենք գտնել կանոնավոր աճող և այս կամ այն հիվանդու-
թյանը համաժամաբար դիմացկուն ու լավ հատկություններով խարժիների
հետ միասին նաև թույլ, նվազ աճող, հիվանդություններին չդիմացող և մի
շարք վատ հատկություններ ունեցող խարժիներ: Նույնը կարելի յե ասել
նաև բոլոր փոփոխակների մասին: Ուրեմն ամեն մի փոփոխակի բոլոր վա-
ղերը մեծապես չեն: Կան մշակութայն համար միանգամայն պիտանի և
բազմացման համար արժանի վաղեր, սակայն դրանց կողքին կան և այնպիսի
վաղեր, վորոնք վոչ միայն արժանի չեն բազմացնելու համար, այլ ավելի շուտ
յեն թակա յեն վոչնչացման: Այստեղից պարզ ե, վոր միևնույն չե՝ թե ինչ
վաղերից ենք կտրոններ ընտրում բազմացնելու համար: Սակավաբեր և վատ
հատկություններ ունեցող վաղերը բազմացնելիս՝ մենք նորից վատ և սակա-
վաբեր վաղեր ենք ստանում, հետևապես կտրոններ վերցնելիս՝ մենք լուրջ
ուշադրություն պիտի դարձնենք վաղերի ընտրության վրա և նրանցից արժե-
քավորները միայն ընտրենք հետագայում բազմացնելու համար: Պիտի լավ
հիշել այն, վոր նոր այգիներն բերքատվությունը մեծապես կախված ե նրա-
նից, թե ինչ ժառանգականություն ունեցող կտրոններով ենք տնկել այգին:

Բազմացման նպատակով վաղեր ընտրելիս՝ անհրաժեշտ ե ուշադրու-
թյուն դարձնել նրանց հետևյալ հատկությունների վրա՝

1. Ընտրած վաղերը միանգամայն առողջ պիտի լինեն և միջոցով (չոր),
ոլորումով (սև), անտրաքնոզով և այլ հիվանդություններով վարակված
չլինեն, քանի վոր հիվանդ վաղերի կտրոնները լավ չեն կալում, թույլ են
աճում և հեշտությամբ այս կամ այն հիվանդությունով նորից վարակվում:
2. վաղերը պիտի կանոնավոր աճած լինեն և բավարար քանակով լավ
փայտացած մատեր ունենան. թույլ և նվազ վաղերի կտրոնները դժվարու-
թյամբ են կալում և անհաջող դարգանում:
3. այն վաղերը, վորոնք տառապում են ծաղկավիժումով (ծաղիկները
թափվում են), բազմացման համար նույնպես անպետք են, վորովհետև այդ
հիվանդագին յերևույթը հաճախ կրում ե ժառանգական բնույթ, այնպես վոր՝
այդ վաղերը կտրոններով բազմացնելու դեպքում, մենք ստանում ենք նույն-
պես ծաղկավիժումով տառապող և սակավ բերք տվող վաղեր: Զպիտի վերց-
նել կտրոններ նաև այն վաղերից, վորոնք տառապում են պտղավիժումով
(պտուղները թափվում են):
4. նշանակություն ունի նաև վաղի հասակը: Յերիտասարդ վաղերի
պտղաբերությունը, ինչպես և նրանց մի շարք հատկությունները դեռ լրիվ
արտահայտված չեն, հետևապես նրանց ընտրությունը բազմացնելու նպա-
տակով բավականին դժվար ե և այս դեպքում հաճախ մենք սխալ յեղրա

կացության կարող ենք հանգել: Կտրոնների սուր կարիքի դեպքում միայն
կարելի յե յերիտասարդ վաղերից կտրոններ վերցնել: Կտրոններ չպիտի վերց-
նել նաև շատ հին և ծերության շրջանն անցնող վաղերից:

Ե. բազմացման արժանի յեն միայն լավ բերքատու վաղերը, անհրա-
ժեշտ ե ընտրել այնպիսի վաղեր, վորոնք թե վորակով և թե քանակով
բարձր բերք են տալիս:

Ե. վերջապես մեր ցանկացած փոփոխակներից միայն վաղերի ընտրու-
թյուն պիտի կատարել և պիտակավորման ժամանակ մեկ փոփոխակի վաղերը
մյուս փոփոխակի հետ չպիտի խառնել:

Ահա թե ինչ հատկությունների վրա յե, վոր պիտի ուշադրու-
թյուն դարձնել վաղերն ընտրելու ժամանակ:

Յերբ պիտի կատարել վաղերի ընտրությունը: Դարձան ետի ժամանակ,
հնարավոր չե վաղի ընտրություն կատարել, նախ՝ դարձանը դժվար ե փոփո-
խակները ճանաչել և բացի դրանից, մենք չենք կարող ճշգրիտ դադար
կազմել վաղերի մի շարք կարևոր հատկությունների մասին, ինչպես, որի-
նակ՝ բերքատվությունը, դիմացկունությունը հիվանդություններին և այլն:
հետևապես վաղերի ընտրությունը պիտի կատարել վեգետացիոն (աճեցու-
ղություն) շրջանում, յերբ լրիվ կերպով արտահայտվում են վաղի բոլոր
հատկությունները և յերբ մենք հնարավորություն ունենք ճիշտ կերպով
ճանաչելու թե փոփոխակները և թե նրանց բոլոր հատկությունները: Ընդ-
հանրապես վաղերի ընտրության աշխատանքներն սկսում են ամառվա յեր-
կրորդ կեսին և վերջացնում այգեկուլի ժամանակ: Վաղերի ընտրության հա-
մար կա յերկու ձև:

1. Ընտրությունը բացառապես հետևյալից ընտրում են սակավաբեր և
վատ հատկություններով վաղերը, վորոնք իրենց վատ հատկությունների
հետևանքով բազմացման համար ցանկալի չեն և դրանց վրա հատուկ նշան-
ներ անում (պիտակներ—յարլինկներ կապում): Նշան արած վաղերից կտրոն-
ներ չեն վերցնում:

2. Ընտրությունը դրական հետևյալից ընտրում են լավ
հատկություններ ունեցող վաղերը, վորոնք ցանկալի յեն բազմացման հա-
մար և դրանց վրա միայն նշաններ անում: Կտրոններ վերցնում են միայն
նշան արած վաղերից: Այս ձևն ավելի վստահելի յե, քան առաջինը, սակայն
համեմատաբար շատ բանվորական ձևը ե պահանջում և ընտրությունը յեր-
կար ե տևում:

Վեր ձևը պիտի կերպով մեր այգեգործական տնտեսություններում:
Անշուշտ, յեթե մեր այգիները տնկված լինելին առանձին փոփոխակներով,
այլ վոչ թե խառն (խոսքս հին այգիների մասին ե), ապա մենք կկիրառե-
յինք առաջին ձևը, այսինքն՝ ընտրությունը բացառապես հատկանիշներով:
Բայց վորովհետև խառն տնկած այգիներում փոփոխակներն իրարից տար-
բերելու համար մենք պիտի նաև նրանց համաբաղախենք, ապա պարզ ե,
վոր ընտրության առաջին ձևն այս դեպքում կիրառելի չե: Նման դեպքերում
պիտի կիրառել միայն յերկրորդ ձևը, այսինքն՝ ընտրությունը դրական
հատկանիշներով: Սակայն կան և այգիներ, վորտեղ հիմնականում գերակշռ-
ում ե փոփոխակներից վորեն մեկը, ինչպես որինակ՝ Ղամարույի շրջանի
մի շարք այգիներում տարածված ե համարյա թե միայն կախթ փոփո-
խակը, Յերեանի և Վաղպատի այգիներում՝ խարժին, Դավալույի վորոշ այ-

գիններում մտնալին, Ղուրդուղուղու շրջանում՝ գտնան դեռևս, Մեղրում՝ ալաղուրան և այլն: Այդ այգիներում ընտրութունը նպատակահարմար և կատարել առաջին ձևով, սակայն այս դեպքում նշանակում են թե հիմնական փոփոխակի վատ վազերը և թե առանձին համարներով պիտակավորում են այդ այգիներում յեղած կողմնակի փոփոխակները, հետևապես առանց նշանի մնում են միայն հիմնական փոփոխակի ընտիր վազերը, փորոնցից և մենք կտրոններ ենք վերցնում: Նույն այդ ձևը կիրառում են նաև յերիտասարդ այգիներում (I, III խորհ. տնտեսութուններ), փորտեղ փոփոխակները տնկված են առանձին կվարտակներով:

Վազերը նշանակելու համար գործ են ածում փայտյա կամ թիթեղյա պիտակներ 5—7 սմ. յերկարությամբ և 3—4 սմ. լայնությամբ: Պիտակները յերկար լարերի (լավ և զործածել ցինկապատ լար, փորն անհամեմատ ավելի յերկար և դիմանում) ոգնությամբ կապում են վազերի բներին կամ բազմամյա թեւերին: Մեզ մոտ գործածում են գլխավորապես թիթեղյա համարազրկած *) պիտակներ: Դրական հատկանիշներով ընտրութուն կատարելու դեպքում անհրաժեշտ և յուրաքանչյուր փոփոխակին հատկացնել փորոշ համարով պիտակներ և այդ պիտակներով միայն տվյալ փոփոխակը նշանակել: Մեր փոփոխակների համարազրկութունը տալիս և Այգեգործական փորձնական կայանը (Յերևան), փորը և դեկավարում և պիտակավորման աշխատանքները մեզ մոտ: Վազերի ընտրության գործը պիտի հանձնել փորձված մարդկանց, փորոնք թե փնիթակները լավ ճանաչել կարողունան և թե ընտրութունը ճիշտ կատարեն:

Գ. ՄԱՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՏՐՈՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Կտրոնների վորակը մեծապես կախված և նրանից, թե ինչ մատերից են նրանք վերցված: Ամեն մի մատ չի կարող պիտանի համարվել լավ կտրոն պատրաստելու համար, վորովհետև, տնգամ կանոնավոր ընտրած վազի բոլոր մատերը միատեսակ չեն և կտրոններ վերցնելու համար չունեն միևնույն նշանակութունն ու արժեքը: Անշուշտ լավ ժառանգականութուն ունեցող նույն վազի վրա առողջ, նորմալ զարգացած մատերի հետ յերեմն պատահում են նաև թույլ, անկանոն կարգացած, այս կամ այն հիվանդութուններով վարակված և մի շարք վատ հատկութուններ ունեցող մատեր: Այս տեսակետից լավ և հաջող կտրոններ ստանալու համար բավական չի միայն վազերի ընտրութուն կատարել, այլ անհրաժեշտ և նաև այդ վազերից լավ վորակով մատեր ընտրել և դրանցից միայն կտրոններ պատրաստել: Մատերի ընտրության ժամանակ անհրաժեշտ և ուշադրութուն դարձնել նրանց հետևյալ հատկութունների վրա.

1. մատերն առողջ ու կանոնավոր զարգացած լինեն, հետևապես վերքեր և հիվանդութունների հետքեր չպիտի ունենան, կարկտահարված կամ ցրտահարված չպիտի լինեն, նորմալ զարգացած աչքեր պիտի ունենան, վորոնք սևացած չպիտի լինեն (ցրտահարութունից կամ այլ պատճառից):

2. մատերը լավ հասունացած և լրիվ փայտացած պիտի լինեն. հետևապես, նայած փոփոխակին՝ կարծրավուն, գորշավուն, դեղնավուն կամ մոխրագույն կեղև պիտի ունենան: Բնափայտը պիտի խիտ լինի և վոշ փխրուն:

*) Թիթեղը կարելի չէ ձեռք բերել Յերևանի Կոստերիկ գործարանի թիթեղագործական բաժնի թափթիկներից: Յե. Ա.

ունենա համեմատաբար փոքր խողովակներ և ավելի հաստ լինի, քան միջուկը (ծուծը): Վորջալի վերջինս սահմանափակ և, իսկ բնափայտը լավ զարգացած, աչքան մատն ավելի լավ և հասունացած:

3. մատերը միջին հաստության պիտի լինեն, պիտի աչքը սովորեցնել յուրաքանչյուր փոփոխակի միջին հաստությանը, վորովհետև, որինակ՝ հուշարաչի մատն ընդհանրապես ավելի հաստ և, քան լորջիլինը կամ ճիլարինը, իսկ վերջիններին ավելի հաստ և, քան Ղումարուլի կախեթինը կամ կարճ մատինը:

4. մատերը միջին մեծության միջնադույցներ պիտի ունենան, այսինքն հանգույցները (կապերը) իրարից վոշ շատ մոտ և վոշ ևլ շատ հեռու պիտի դասավորված լինեն: Այստեղ ևս աչքը պիտի սովորեցնել յուրաքանչյուր փոփոխակի միջնադույցի միջին մեծությունը, որինակ՝ մախալին, քիշմիշը ավելի յերկար հանգույցներ ունեն, քան ճիլարը, խարջին, մանավանդ կարճ-մատը:

2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում բերած ցուցանիշները ցույց են տալիս, վոր մատերը լավ են սնվել և սննդանյութերով հարուստ են: Հիշելի միայն սննդանյութերով հարուստ կտրոնը կարող և լավ արմատակալել և հաջող զարգանալ: Բարակ մատերը մնացել են բարակ, վորովհետև անհրաժեշտ քանակությամբ սնունդ չեն ունեցել և չեն կարողացել աճել, իսկ հաստ մատերն ուժեղ և արագ աճեցողության հետևանքով, բոլոր սննդաբար նյութերը ծախսել են իրենց աճման վրա և կուտակում չեն կատարել, կամ քիչ են կատարել, հետևապես, թե բարակ և թե հաստ մատից վերցրած կտրոնները դժվարությամբ են արմատակալում և անհաջող զարգանում:

5. մատերը վորոշ յերկարություն պիտի ունենան: Յեթե մատերն այնքան կարճ են, վոր չեն ապահովում կտրոնների պահանջվող յերկարությունը (տես կտրոնների յերկարությունը եջ 15), ապա պարզ և, վոր այդ մատերից կտրոններ չպիտի վերցնել: Յերկար, բայց նորմալ զարգացած մատից հնազավոր և վերցնել յերկու և նույնիսկ ավելի կտրոն (տալով կտրոններին պահանջվող յերկարությունը):

6. մատերը պետք և նստած լինեն յերկամյա բնափայտի (յերկու տարեկան մատի) վրա: Բնամատից (հոտամատ) և բճամատից (տերեխ ծոցից գուրս յեկած մատը—բճալիվ) կտրոններ չպիտի վերցնել, վորովհետև նրանք՝ քիչ քանակությամբ սննդաբար, նյութեր պարունակելու հետևանքով, դժվարությամբ են արմատակալում:

7. մատերի ընտրությունը պիտի կատարել միայն պիտակավորված այգիների ընտիր վազերից:

Անհրաժեշտ և, վոր այգեգործական ամեն մի խորհդ. և կոլ. տնտեսութուն հաշվի առնի մատերի վերև թված հատկութունները և ըստ այնմ ել կտրոններ վերցնի:

Մատերի ընտրությունը սովորաբար կատարում են կտրոններ վերցնելու ժամանակ: Այդպես են անում և մեզ մոտ. զարնանը, ետի ժամանակ թե՛ մատերն են ընտրում և թե՛ կտրոններ վերցնում: Անհրաժեշտ և վորակյալ ետվորներից հատուկ ըրիզադներ (մատ բռնողներ) կազմակերպել, վորոնք նախքան այգիների համատարած ետը, մատերի ընտրություն կատարեն և այդ մատերից կտրոններ պատրաստեն:

Բրիգադի յուրաքանչյուր անդամ լավ պիտի գիտակցի մասերի ընտրւելուն կարեւորութիւնը յիշ ընտր մասերից միայն կտրուենք վերցնի, սակայն այնպէս, վոր մայր վազի բեքտաւորութիւնն ապահովված լինի:

Ընտրած մասերը համապատասխան տեղերից (նայած քանի աչք ե ժը նալու. վազի վրա) կտրոււմ են և տալով կտրոններին պահանջվող յերկարու թիւը, նրանց ծայրի բարակ մասերը հեռացնում են: Կտրոնների վրա յեղած բոլոր թելիկներն ու բճամատները նույնպէս հեռացնում են: Այնուհետև կտրոնը հիմքում, հանգուցի տակ հարթ կտրոււմ են: Պատրաստված կտրոնները հավաքում են մի տեղ և նրանցից խրճեր կազմում ու 1—2 տեղից, լարով կամ թռկով (կարելի յե և խաղողի մատով, ուռնու շիվով) ամուր կապում: Խրճերն այնպէս պիտի կապել, վոր կտրոնների հիմքերը մեկ մակարդակի վրա լինեն (նկ. 11.):



Նկ. 11. Կտրոնների խուրճ

Մենք մի խրճի վրա փայտյա պիտակ*) են կապում, վորի վրա գրում են փոփոխակի անունը, կտրոնների պատրաստման վայրը, ամսաթիվը, կտրոնների քանակը և, դիմադրկութիւնը վերացնելու համար, խրճեր կապողի ազգանունը: Այսպէս, որինակ՝ պիտի գրել. «Խարջի, Լ. Խորհ. տընտես.—Դալմա, 10/IV—1933 թ., Զադոյան Գրիգոր»: Յետեւ խրճերն ստանդարտ մեծութիւն են (միւսնույն քանակութիւնը կտրոններից են կազմված), ապա պիտակների վրա կտրոնների քանակը կարելի յե չգրել թիւ՝ կտրոններ վերցնելու և թիւ խրճեր կապելու ժամանակ վնչ մի դեպքում մեկ փոփոխակի կտրոնները մյուս փոփոխակի հետ չպիտի խառնել: Մեզ մոտ ընդհանրապէս 100—200 կտրոնից մի խուրճ են կապում: Կտրոնները (խրճերը) բացողյա, մանավանդ տաք ու չոր յեղանակներին, մեծ քանակութիւնը ջուր են գոլորշիացնում և հեշտութիւնը չորանում են: Այդ պատճառով պատրաստված խրճերը հենց նույն որը պիտի տեղափոխել նշանակված տեղը, վորտեղ նրանց վորոշ ձևով պահւում են մինչև տնկելը:

6. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՇԷԼՆ ՈՒ ՓՈՒԱԴՐԵԼԸ

Աշնան թե գարնան պատրաստած, ինչպէս և ուրիշ տեղից ստացած կտրոնները մինչև տնկելը պիտի կանոնավոր պահել: Կտրոնները պահելու վրա յուրջ ուշադրութիւն պիտի դարձնել, վորովհետև նրանց կաշիւու հաշտութիւնը կախված ե նաև կտրոնները պահելու պայմաններից: Յերբեմն կտրոնները պահելու վրա հարկ յեղած ուշադրութիւնը չեն դարձնում և վատ պայմաններում պահելու հետեւանքով, լավ ընտրված կտրոնները, տնկման բարենպաստ պայմաններումն անգամ, անհաջող են կաշիււ, նրանց չնչին, տոկոսն ե միայն զարգանում: Մինչդեռ տնկման նույն պայմաններում, նույն վորակի, բայց լավ վիճակում պահպանված կտրոններն ուժեղ արմատներ ու շիվեր են արձակում և շատ հաջողութիւնը են զարգանում: Կտրոններն

*) Կարելի յե և թիթեղյա համաքաղրված պիտակ կապել Յե. Ա.:

այնպէս պիտի պահել, վոր նրանք թարմ ու միանգամայն առողջ լինեն, չցըրտահարվեն, չորութիւնից կամ չափից ավելի խոնավութիւնից չկուսվեն, չբորբոսնեն, նրանց բողբոջները (աչքերը) սեղացած, փթած չլինեն և կամ ժամանակից շուտ չբացվեն: Դրա համար կտրոնների պահելու տեղը (միջավայրը) պիտի ունենա՝

1. համեմատաբար ցածր ջերմութիւն (ամենից լաջն ե $+20^{\circ}$ -ից մինչև 8° C). բարձր ջերմութիւն (10° -ից բարձր) դեպքում՝ բողբոջները կարող են ժամանակից շուտ բացվել և շիվեր արձակել, վորոնք կարճ ժամանակից հետո փչանում են. այս դեպքում կտրոնները հաջողութիւնը չեն արմատակալում (սեւ եջ 15 և 32): Չափազանց փայտակար ե բարձր ջերմութիւնը, մանավանդ յիթի միջավայրը շատ խոնավ ե լինում: Նման դեպքում բողբոջները փտում են և նույնիսկ կտրոնները կարող են կորցնել կաշիւու ունակութիւնը: Մյուս կողմից, շատ ցածր ջերմութիւնը նմանապէս վնասակար ե, վորովհետև սառնամանիքներից կտրոնները հեշտութիւնը ցրտահարվում են*):

2. չափավոր խոնավութիւն (մոտ 10%). շատ խոնավ պայմաններում կտրոնները հեշտութիւնը կարող են բորբոսնել և նեխել, բողբոջները նույնպէս կարող են նեխել. չոր պայմաններում կտրոնները մեծ քանակութիւնը ջուր են գոլորշիացնում և անգամ այնքան չորանում, վոր կորցնում են իրենց կենսականութիւնը:

Ողի պակասութիւնը կտրոնները նեխում, փթում են և տնկելու համար անպիտք դառնում:

Այս յերեք հիմնական պայմանների կիրառումը միանգամայն ապահովում ե կտրոնների կանոնավոր պահպանութիւնը: Այս տեսակետից վորտեղ և ինչ ձևով ել կտրոնները պահելու լինենք, միւսնույն ե, այդ պայմանների վրա հատուկ ուշադրութիւն պիտի դարձնել. առաջինը հիշել՝ վնքան կտրոններն առողջ են և կանոնավոր հասունացած, այնքան նրանք թե տեղում լավ են պահվում և թե փոխադրելուց չեն տուժում. յերկրորդ՝ պիտի աշխատել վոր կտրոնների պահելու միջավայրը (հող, ավազ) վերը թված պայմաններն ունենա:

Կտրոնները պահում են ավազի կամ հողի մեջ.—

ա) բացողյա պայմաններում՝ խրամատների մեջ (կտրոնները պահելու հասարակ և ամենատարածված ձևն ե հանդիսանում).


բ) ծածկի (չարգախի) տակ (ПОД НАВЕСОМ).

գ) նկուղներում կամ այդ նպատակով կառուցված հատուկ պահեստաբաններում:

Ա. Կտրոնների խրճերը բացողյա պայմաններում պահելու համար, վորեն ազատ, բայց վոշ խոնավ տեղում (այգում) փորում են 0,5—1 մետր, անգամ ավելի խորութիւնը (վոր կախված ե խրճերի յերկարութիւնից և կամ թե նրանց հաստութիւնից, յիթի խրճերը հորիզոնական գրութիւնը ենք դասավորելու). 1,5—2 մետր լայնութիւնը և վորոշ յերկարութիւնը խրամատներ (առուներ). յերկարութիւնը կախված ե կտրոնների (խրճերի) քանակից: Խրամատների մեջ խրճերը դասավորվում են իրար կից ուղղահայաց (կանգնած) կամ հորիզոնական (պառկած գրութիւնը. դասավորելու հետ միաժամ

*) Անհրաժեշտ ե հիշել, վոր կտրոնների ցրտադիմացկունութիւնն անհամեմատ ավելի թույլ ե, քան վազերի վրա թողած մատերինը:

մանակ խրճերի արանքները հողով լցնում են: Դասավորելուց հետո խրամա-
տը վերևից փութը հողով (ավազախառն) բոլորովին ծածկում են, այնպես
վոր տեղավորված խրճերի վրա վորոշ մեծությամբ հողաշերտ (ծածկոց) կաղ-
մվի, վորի (հողաշերտի) հաստությունը, կտրոնները գարնանը պահելու դեպ-
քում, շատ փոքր և լինում (մոտ 10 սմ.). բնդհակառակը՝ աշնանը պահելու
դեպքում, խրճերի վրա հողի ավելի հաստ շերտ են կաղմում (15—30 սմ.,
վորը կախված է ավազի շրջանի ձմրան կլիմայական պայմաններից): Համե-
նայն դեպս այդ ծածկոցը գմտնի յերեսից բարձր պլատի լինի, վորպեսզի
շատ խոնավություն չկուտակվի (տես նկ. 14): Աշնանը խրճերը, ընդհանրա-
պես, ուղղահայաց են դասավորում, իսկ գարնանը՝ հորիզոնական:




Նկ. 12. Խրճերի պահելը խրամատներում

Յերբեմն գարնան տաք որերին խրամատների հողը շատ է չորանում.
այս դեպքում՝ անհրաժեշտ է, ժամանակ առ ժամանակ, հողը խոնավացնել՝
շաղ տալով նրա վրա քիչ քանակությամբ քուր: Այս ձևով կտրոնները
պահում են մինչև տնկելը կամ մի այլ տեղ փոխադրելը (ուղարկելը):

Բ. Կարելի չէ նույնպիսի խրամատներ պատրաստել նաև մի վորևե
ազատ ծածկի կամ չարդախի տակ, վորտեղ կտրոնների խրճերը դարսում
են և ծածկում նույն ձևով, ինչպես և բացողյա պայմաններում պահելու
դեպքում: Բացի դրանից, ծածկի տակ կտրոնները պահում են հետևյալ ձևով.
ծածկի պատի ուղղությամբ, դետնի վրա մոտ 10—20 սմ. բարձրությամբ
ավազ են փռում, վորի վրա կողք կողքի պտուկեցնում են կտրոնների խրճե-
րը, դրանց վրա նորից ավազ են լցնում (մոտ 5 սմ. բարձրության շերտով),
ապա այդ ավազի վրա դարսում են դարձյալ խրճեր, վորոնց վրա նույն
հաստության շերտով նորից ավազ են լցնում և այդպես շարունակում—մի մի
շարք կտրոնի խրճեր և մի մի շարք ավազի շերտեր, մինչև վոր ամ-
բողջ կույտի բարձրությունը հասնի մոտ յերկու մետր: Վերջին շարքը
պետք է ծածկված լինի մոտ 15—20 սմ. ավազի շերտով: Սովորաբար չորս
շարքից (մոտ 2 մետր բարձրություն) ավելի չեն դասավորում, վորովհետև
շատ շարքեր դասավորելու դեպքում՝ ներքևի շարքը ողի պակասության հե-
տևանքով հեշտությամբ փչանում է: Ավազը խրճերի վրա լավ պահելու և
վայր չսողալու համար, դետնի վրա, կույտի մոտ մի քանի ցցեր են կանգ-
նեցնում, վորոնց վրա ավազի կույտը բարձրացնելու հետ աստիճանաբար
հենում են տախտակներ: Ավազ չլինելու դեպքում, կարելի չէ փութը հող
վերցնել:

Գ. Անհամեմատ ավելի լավ և կտրոնները պահել սառը և լավ հովհար-
վող նկուղներում, կամ այդ նպատակով կառուցված հատուկ պահեստներում,
վորտեղ հեշտությամբ կարելի չէ կանոնավորել և անհրաժեշտ բարձրության
վրա պահել ջերմությունը և խոնավությունը, ինչպես և պահված կտրոննե-
րի խրճերը հարկ յեղած դեպքում հովհարել:

Նկուղներում կամ հատուկ պահեստարաններում կտրոնները պահում են
ավազի մեջ (տես նկ. 13) նույն ձևով, ինչպես և ծածկի կամ չարդախի տակ:
Կտրոնները պահելու այդ ձևը (նկուղներում կամ պահեստարաններում) չնա-
յած ավելի լավ է, քան վերևում նկարագրվածները, բայց այնքան տարած-
ված չէ, վորովհետև մեծ աշխատանք է ծախսեր և պահանջում:



Նկ. 13. Խրճերի պահելը ավազանի մեջ

Բնդհանրապես կտրոնները պահում են բացողյա պայմաններում, խրա-
մատների մեջ, մանավանդ այն շրջաններում, վորտեղ կտրոնները գարնանն են
պատրաստում: Խորհրդային Հայաստանի այդպիսի շրջաններում կտրոն-
ները նույնպես պահում են բացողյա պայմաններում, խրամատների մեջ, հո-
րիզոնական կամ թեք դրությամբ:

ԿՏՐՈՆՆԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼԻ (ՈՒՂԱՐԿԵԼԻ)*: Կտրոնների փոխադրումը ժամա-
նակ նմանապես պիտի պահպանել այն բոլոր պայմանները (ջերմություն,
խոնավություն և ուր), վորոնք անհրաժեշտ են կտրոնները տեղում կանոնա-
վոր պահելու համար: Այս տեսակետից կտրոնները կարելի չէ փոխադրել
կամ աջանալ, յերբ սառնամանիքները դեռ չեն սկսվել, կամ վաղ գարնանը,
յերբ ձմռան սաստիկ ցրտերն արդեն անցել են: Կտրոնները մոտակա վայ-

* Կտրոններ, տնկիներ փոխադրելիս (նեբուժելիս) պիտի առաջնորդվել Ֆիլոքսերայի
կարատի նախ հրատարակված կանոնադրությամբ, վոր հաստատված է Միութենա-
կան Հողագիտության կողմից 1931 թվի հոկտեմբերի 10-ին: Կանոնադրությունը կարելի չէ
ստանալ տեղական ՈՌՎ-ի կարտասիսայի բաժնից: Ցե. Ասլան.

բեր (10—15 որ համապարհելու տեղում թյամբ) փոխադրելու համար, խրճե-
րի ծայրերը խոնավ մամուռով, ծղնոտով կամ խոտով լավ ծածկում են: այ-
նուհետև խրճերը փաթաթում են ճիլովի մեջ, վորի ծայրերը իրար վրա բե-
րելով՝ կարում են և վրայից թողնում ամուր կապում: Խրճերի վրա թե դրսից
և թե ներսից մի քանի (2—3 ըստ համապատասխան փոփոխակի) պիտակ են
կապում: Հեռավոր վայրեր (20 որ և ավելի համապարհելու տեղում թյամբ)
փոխադրելու դեպքում՝ խրճերի ընդերքը ծղնոտով կամ մամուռով լավ ծած-
կում են, դրանց վրա խոտ փռում և նույն ձևով ճիլովիների մեջ գետնից
Յերբեմն փոխադրում են նաև արկղներով, վորոնց մեջ ավաղ, մամուռ կամ տորֆ
են լցնում և դրանց մեջ կտրոնները շարքերով դասավորում: Կտրոնները փո-
խադրելու այդ ձևը (արկղներով) թեև լավ է, սակայն այնքան էլ դեռ տա-
րածված չէ և առայժմ գործնական նշանակություն չունի, քանի վոր շատ
աշխատանք և մեծ քանակությամբ արկղներ և պահանջում: Հարևան շրջան-
ներ կտրոնները (խրճերը), յեթե համապարհին 2—3 որից ավելի չեն մնա-
լու, փոխադրում են սովորաբար բաց դրոթյամբ, փռելով դարսած խրճերի
վրա խոտ կամ բելում (կարելի չէ և բերդենտ փռել):

Կտրոնները պահելու և փոխադրելու համար պահանջվող հաշվարկը (խը-
րամատներ, նկուղներ, պահեստարանների, ճիլովի, թուփ, լարի և այլն) հեշ-
տացնելու նպատակով ստորև բերում ենք 1933 թվին Գյուղատնտեսական ին-
ստիտուտի ուսումնական տնտեսությունում կատարված խաղողի մի քանի
փոփոխակների (տեղական և ոտար — խրճերի, կտրոնների) չափումների ար-
դյունքները*):

Տախտակում արվում են կատարած չափումների միջին արժանքները:

№-ը ըստ կտրոնի	ՓՈՓՈՓԱԿՆԵՐ	Զափած քանակը	Խրճերի մեջ լինելու սահմանը	Խրճերի մեջ լինելու սահմանը	Խրճերի մեջ լինելու սահմանը	Խրճերի մեջ լինելու սահմանը	1000 կտրոնի կշիռը	Կտրոնների քանակը մեկ խրճի մեջ
1	Խաղող	10	70	25	78,5	6,5	32,5	200
2	Ճիլար	8	70	25	78,5	6,5	32,5	200
3	Հաշարաշ	10	70	30	94	7,5	37,5	200
4	Մսխալի	10	70	28	87	7,3	36,5	200
5	Մս, սկառ սպիտակ . . .	4	70	72	226	26,8	26,8	1000
6	» վարդապուշ	2	70	78	245	29,0	29,0	1000
7	Սերսիալ դե մադերա . .	2	70	72	226	25,8	25,8	1000
8	Սեմլիոն	2	70	74	232	26,7	26,7	1000
9	Գեղրո-խիմենա	1	70	80	251	24,4	24,4	1000
10	Փարմիտ	1	70	90	283	29,2	29,2	1000
11	Սափերավի	1	70	75	235	23,4	23,4	1000

* Չափումները կատարել են Սյգեդործ, ամբիոնի հանձնարարությամբ նույն ինստի-
տուտի ուսանողները՝ Վոսկանյան Փայուհի, Մկրտչյան Շավարշ և Ասլանյան Գուրգեն:

Տեղական փոփոխակների կտրոնները վերցված են յեղել թորհրդ. տ-
նաջին տնտեսությունից (Դավա) և չափումները կատարված են կտրոնները
պատրաստելուց ու 4 որ խրամատներում պահելուց հետո: Ոտար փոփոխակ-
ներն ստացվել են Ղրիմից (համապարհին մնացել են 26 որ) և չափումները
կատարվել են կտրոնները դեղինֆեկցիա անելուց մի որ հետո:

7. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԵՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Վերը նկարագրված ձևերով պահպանված կտրոնները, ինչպես և ուրիշ
տեղից ստացվածները գործադրվելուց առաջ պետք է ուշադրությամբ դնեն-
վեն և փչացածները հեռացվեն: Թյուրիմացության տեղիք չտալու համար
ուրիշ տեղից ստացած կտրոնների վորակը, նրանց պիտանիությունն ստու-
գում են հենց կտրոններն ստանալու որը և ստուգման արդյունքների մասին
համապատասխան արձանագրություն կազմում: Սակայն յեթե փոխադրու-
թյան ժամանակ սառնամանիքներն այնքան խիստ են յեղել, վոր կտրոննե-
րը փաթաթելու նյութերը (մամուռ, ծղնոտ, խոտ և այլն) սառույց են բռնել,
ապա նման դեպքում ստուգումը պիտի կատարել հակերը (խրճերը) նույն
դրոթյամբ (առանց բացելու) մի յերկու որով (մինչև վոր խրճերի վրա յե-
ղած սառույցը հալվի) տաք տեղում պահելուց հետո: Կտրոնների պիտա-
նիությունը վորոշելու համար շատ ձևեր կան, նշենք դրանցից հետևյալ-
ները:

1. զանազան խրճերից կտրոնների մի շարք նմուշներ են վերցնում,
սուր դանակով կամ սեկատորով յուրաքանչյուր կտրոնի միջհանգույցի վրա
թեթև կտրվածներ են առաջացնում (կամ ծայրերը կտրում, թարմացնում)
և մի յերկու աչք կտրում: յեթե կտրվածքները թե կեղեվին (կամ ծայրերին)
և թե աչքերին կանաչ են և հյութալից, սեղ կամ գորշ բծեր չունեն, կնշա-
նակի կտրոնները լավ են պահպանվել և միանգամայն կենսունակ
են, իսկ յեթե կեղեվի կտրվածքները գորշ կամ սեղավուն են, աչքերին
սեղ կամ թեև կանաչ, բայց սև բծերով, ապա նման կտրոնները փչացած են
և գործածության համար անպետք: Պատահում է, վոր կեղևի կտրվածքները
կանաչ են լինում, իսկ աչքերինը սև, դա նշանակում է, վոր կտրոնների
աչքերը լավ չեն պահվել և փչացել են: այս դեպքում կտրոնները նույնպես
փչացած պիտի համարել, քանի վոր նրանք չիվեր տալ չեն կարող և հեշտու-
թյամբ փչանում են, անգամ յեթե արմատներ արձակած լինեն: Այս հանգա-
մանքը գործնականում յերբեմն անտեսում են և կտրոնների պիտանիու-
թյունը վորոշում են միայն կտրոնի կեղևի վրա առաջացրած կտրվածքների
գույնով, իսկ նրա աչքերի վրա շատ քիչ ուշադրություն են դարձնում: Այս
ձևով կտրոնների պիտանիությունը վորոշելու համար, աչքը պիտի սովորե-
ցրած ունենալ ճանաչելու թե առողջ և թե խոտանի կտրոնը:

2. Վերցրած նմուշները թարմացնում են, հիմքերով տեղավորում են
ջրով լի վորակ ամանի մեջ և տաք տեղում (սենյակ, ջերմոց, ջերմատուն,
15—30° C) մի քանի որ պահում: Յեթե 5—6 որից հետո կտրոնների աչքե-
րը (բողբոջները) սկսում են ուռչել, կամ կտրոնների վերին ծայրը կտրելիս
կտրվածքի վրա ջրի մանր կաթիլներ են առաջանում, ապա նշանակում է
կտրոնները լավ են պահպանվել և կենսունակ են: Այս ձևը, վոր առաջարկել
է Ֆրանսիայի գիտնական Լ. Վիալան, ավելի վստահելի չէ, քան առաջինը:

8. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՏՆԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ


Տնկելուց առաջ կտրոնների կանոնավոր նախապատրաստումը կարևոր նշանակություն ունի, նախապատրաստման ընթացքում նախապատրաստված և արագացնել կտրոնների արմատավաճման պրոցեսը և հետագայի շիվերի տաշանալը, ձգտելով իրար մոտեցնելու այդ յերկու տարբեր պրոցեսների սկսվելու մոմենտները: Կտրոնների նախապատրաստման աշխատանքները ճշտությամբ և նպատակահարմար ձևով կատարելուց և կախված նրանց կաշիվու հաշոգումը: Այստեղ մենք կանգ կառնենք կտրոնները նախապատրաստելու ամենատարածված և գործնական նշանակություն ունեցող ձևերի վրա: Ինչ ձևով ել կտրոնները նախապատրաստելու լինենք, միևնույն է, նրանք պիտի մեկ առ մեկ թարմացնել և նրանցից խոտանները հեռացնել:

Ա). Խրճերի ստուգումը: Տնկելուց մի քանի (3—10) օր առաջ, կտրոնները պահած տեղից (խրճատներից) հանում են և նրանց դրուծյունը, վիճակը պարզելու նպատակով, հանած խրճերը մեկ առ մեկ ուշադրությամբ նայում: Յեթե այդ հարեկանցի ստուգումից պարզվեց, վոր կտրոններն այնքան ել լավ չեն պահվել, քիչ թե շատ չորացել են, բորբոսներ և այլն, ու նրանց վորակի մասին կասկած և առաջանում, ապա անհրաժեշտ է լինում կասկածելի խրճերի պիտանիությունը վորոշել մեկ արդեն հայտնի ձևերով (տես եջ 31): Ստուգման ժամանակ խոտանված և տնկելու համար անպիտք համարած բոլոր կտրոնները պետք է հեռացնել:


Բ). Կտրոնների քարմացումը յեկ տնկավորումը: Ստուգված ու պիտանի ձանաչված խրճերը տեղափոխում են վորեն սովորապես տեղ, նրանց կապերն արձակում են, և կտրոնները սուր սեկատորով մեկ առ մեկ թարմացնում (ծայրերը մի փոքր կտրում): Թարմացման ժամանակ կտրոնը հիմքում պիտի կարել հենց հանգույցի տակ, և կտրվածքը՝ ուղիղ ու հարթ պիտի անել, Վերևի (բաբակ) ծայրը թարմացնելիս, կտրվածքն աչքից մի 3—4 սմ. բարձր, աչքին հակառակ և թեք պիտի լինի, վորպեսզի կտրվածքից հոսող հեղուկն աչքի վրա չթափվի և դրանից աչքը չփչանա: Թարմացնելուց դատ հեռացնում են կտրոնների վրա յեղած բոլոր բնածառները և թելիկները: Թարմացման հետ միաժամանակ անհրաժեշտ է առանձին ուշադրությամբ դնել ամեն մի կտրոն և փչացածները խոտանել, իսկ թույլ, կարճ, կամ վորակի տեսակետից կասկածելի կտրոններն առանձին դարսել և ոգտագործել նրանք, յեթե միայն կտրոնների խիտ կարիք է դգացվում. նման դեպքում այդ կտրոնները պիտի տնկել միայն տնկարանում, այն ել ոսկորականից ավելի խիտ դասավորությամբ (տես եջ 50): Հիմնական տեղում տնկելու համար պիտի ջոկել ամենալավ և միանգամայն վստահելի կտրոններ: Ամեն մի փոփոխակ առանձին պիտի թարմացնել ու տեսակավորել առանց տարբեր փոփոխակների կտրոններն իրար խառնելու:

Գ). Կտրոնները քի մեջ դնելը: Թարմացրած կտրոնները՝ 100-ից—200-ական մեկտեղ կանոնավոր դարսում են և կտրոնների հիմքերը մեկ մակարդակի վրա պահելով, նորից խրճեր են, կաղմում, յուրաքանչյուր խրճի վրա նույն փոփոխակի պիտակը կապում: Պատրաստված խրճերն ուղղահայաց դրուծյամբ, հիմքերով, խրճերի մոտ 1/3 յերկարությամբ չափով (15—20 սմ.) խորասուզում են ջրի մեջ (առու, դետակ և այլն), վորի ջրմուծյունը 10°-ից պակաս չպիտի լինի: Խրճերը հոսող ջրի մեջ ուղիղ կանգ-

նելու և շուտ չզալու համար, յերեմն խորհուրդ են տալիս խրճերը կապելու ժամանակ նրանց մեջ մոտ մեկ մետր յերկարությամբ փայտե ձողեր անցկացնել (յուրաքանչյուրի մեջ մեկ ձող) և դրանցով խրճերը ջրի հատակին ամրացնել (տես նկ. 14): Սակայն այս ձևը գործնական չէ: Հոսող ջուր չլինելու դեպքում, խրճերը կարելի յե դնել վորեն ջրամբարի (տես նկ. 15), կամ ջրով լի ամանի (կիսատակառ, մեծ տաշտ և այլն) մեջ, այս դեպքում 2—3 օրը մեկ անգամ անհրաժեշտ է ջուրը փոխել, քանի վոր կանգնած ջրի մեջ կտրոնները հեշտությամբ կարող են նեխվի: Կտրոնների ջուրը դնելը կարևոր նշանակություն ունի, վորովհետև՝ նախ, նրանք ներծծելով վորոշ քանակությամբ ջուր, թարմանում են ու ալտիվ աշխատանքի անցնում և յերկրորդ, ներծծված ջուրը լուծում է կտրոնների մեջ կուտակված սննդարար նյութերը, վորոնք անհրաժեշտ են արմատներ առաջացնելու համար: Հիշվի, ջուրը դրած կտրոնները հողում դրուծյամբ են արմատակալում և հաջողությամբ կաշուում: Բացի դրանից, ջուրը դնելն ունի և այն առավելությունը, վոր հնարավորություն է տալիս հեշտությամբ ձանաչելու խոտան և տնկելու համար անպիտք կտրոնները (տես եջ 31) Կտրոնները ջրի մեջ պահում են, նայած նրանց խոնավությանը, 2—10 օր: Համենայն դեպս պիտի աշխատել կտրոնները 10—12 օրից ավելի չպահել ջրի մեջ, վորովհետև յերկար ժամանակ պահելու դեպքում, կտրոնների սննդաբար նյութերի մե մասը լվացվում է ջրի մեջ և ի դուր կորչում, և մյուս կողմից, կտրոնները հենց ջրի մեջ յեղած ժամանակ կարող են արմատներ արձակել, վորոնք սակայն այնքան թույլ և նուրբ են լինում, վոր տնկման ժամանակ հեշտությամբ փչանում են և հետագա դարգացման համար անպիտք դառնում: Բացի դրանից, այդ կտրոնների աչքերը նույնպես կարող են բացվել և շիվեր արձակել, այս դեպքում առաջացած շիվերը վոչ միայն չեն նպաստում կտրոնները կաշիվուն, (տնկելուց հետո այդ շիվերը շուտով չորանում են), այլ նրանք իրենց անհեղուկությամբ համար կտրոններից վորոշ քանակությամբ սննդարար նյութեր վիրցնելով, թուլացնում են կտրոնները հողում արմատակալելու պրոցեսը. նման շիվերը, կտրոնները տնկելու ժամանակ, պիտի հեռացնել, վորպեսզի ի դուր ջուր չգործընթացան և կտրոնները չչորացնեն: Վերջապես, կտրոնները ջրի մեջ յերկար պահելու հետևանքով, կարող են նեխվի:



Նկ. 14. Խրճերը հոսող ջրի մեջ դարած



Նկ. 15. Խրճերը ջրամբարի մեջ դարած

Կազմ քաղմացումը կտրոնների միջոցով—3.

Գ). Կտրոնների ստրատիֆիկացիան*)։ Կտրոնների արմատակալման պրոցեսն արագացնելու լավագույն միջոցը ստրատիֆիկացիան է։ Ստրատիֆիկացիան կայանում են րանում, վոր արհեստական ձևով ստեղծում ենք անհրաժեշտ նպատակովոր պայմաններ (Ջերմություն, խոնավություն, ուղ), վորոնց առկայությամբ կտրոնները նախապատրաստվում են արմատակալելու, անգամ արմատներ արձակելու (վոր կախված է պտրատիֆիկացիայի պայմաններից և նրա տեղությունից), վորից հետո միայն կտրոնները տնկում են տնկարանում կամ հիմնական տեղում։ Ստրատիֆիկացիայի շնորհիվ բացառիկ նշանակություն ունի պայմաններ են ստեղծվում կտրոնները տնկում (տնկարանում, կամ այգում) հաջողությամբ կաշխելու և կանոնավոր զարգանալու համար։ Ստրատիֆիկացիայի համար կարելի չէ ուղտագործել տնտեսություն մեջ յեղած Ջերմատները, Ջերմոցները, կամ տաքացվող պահեստարանները, կամ ել աղատ սենյակները։ դրանց բացակայության դեպքում նաև ծածկի (չարդախի) տակ, կամ բացողյա պայմաններում պատրաստված խրամատները։ Ստրատիֆիկացիան կատարում են ընդհանրապես ավաղի մեջ, ավաղ չլինելու դեպքում կարելի չէ փուխը հող վերցնել։ Ստրատիֆիկացիա կատարելու համար, կտրոնները նախապես թարմացնում են և խրճեր կապում։

Ջերմատներում կամ պահեստարաններում (սենյակներում) ստրատիֆիկացիա կատարելու համար կտրոնների խրճերը ավաղի (հողի) մեջ դարսում են նույն ձևով, ինչպես կտրոնները պահեստարաններում կամ նկուղներում պահելու դեպքում (տես եջ 26)։ այն տարբերությամբ միայն, վոր ստրատիֆիկացիայի համար խրճերը վերելից ավաղի փոքր շերտով (մոտ 10 սմ.) պիտի ծածկել։ Պետք է շարունակ հետևել, վոր ստրատիֆիկացիոն Ջերմատան, պահեստարանի և այլն՝

1. Ջերմությունը 12°-ից պակաս և 30°-ից (ըստ Յելսիուսի) բարձր չլինի (ոպտիմումը 25—28°)։

2. ավաղը բավարար խոնավություն պարունակի, հարկ յեղած դեպքում, մոտավորապես 2—3 որը մեկ անգամ, ավաղը պիտի ջրել։


3. Ջերմատան (պահեստարանի) ողը մաքուր պիտի լինի։

Այս պայմաններում 10—20 որից (վորը կախված է Ջերմության ու խոնավության աստիճանից) հետո կտրոնների ներքևի կտրվածքների վրա առաջանում են հյուլթալից առաձգական նոր հյուսվածքներ, վորոնք հայտնի լին կալլուս անունով։ հանգուցյների մոտ առաջանում են բլրականման ուռուցքներ, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ կտրոնի կեղևի տակից դուրս յեկող արմատներ։ կտրոնների ծայրի աչքերը (հիմքի աչքերը ստրատիֆիկացիայից առաջ հեռացված են լինում) սկսում են բացվել։ Կալլուսի և բլրականման արմատների առաջանալը նշան է, վոր կտրոնները բավականաչափ նախապատրաստվել են արմատակալելու և միանգամայն պատրաստ են տնկելու համար։ Հենց այս ժամանակ խրճերը ավաղից պիտի հանել և խոտանները հեռացնելու նպատակով, կտրոնները մեկ առ մեկ ստուգել և աղա նշանակված տեղը տնկել։ Սակայն, յեթե տնկարանի կամ այգու հողը դեռ սառն է, (հողի վերելի շերտի Ջերմությունը 10°-ից դեռ ցածր է) կամ յեղանակները նպատակովոր չեն տնկելու համար և մենք ստիպված ենք կտրոնների տնկելը հետաձգել, ապա Ջերմատան,

*) Ստրատիֆիկացիա լատիներեն բառ է, վոր նշանակում է՝ Strata—լերտ, facere—անել։

Ջերմոցի, տաքացվող սենյակների Ջերմությունը պիտի իջեցնել, վորպեսզի առաջացած բլրականման արմատները չերկարեն, հակառակ դեպքում տնկելու ժամանակ նրանք հեշտությամբ կարող են կտրվել։ Յեթե այդ արմատներն արդեն բավական յերկարացել են, ապա, այս դեպքում պիտի սպասել, մինչև վոր նրանց հիմքերը ծածկվեն խցանային հյուսվածքով, վորպեսզի տնկելուց արմատները չփչանան։

Աչքերի բացվելը հետաձգելու համար ստրատիֆիկացիան Ջերմոցներում կատարելու դեպքում, կարելի չէ կիրառել դյուղատնտես Բուզինի առաջադրած ձևը, վոր նա մշակել է Ղրիմում, Մաղարաջի այգեգործական փորձնական կայանում։ Դրա համար պատրաստում են մի Ջերմոց, վորը սովորականից տարբերվում է նրանով, վոր նախ խորն է (մոտ 3 մետր), յերկրորդ՝ գոմադր չեն լցնում և յերրորդ՝ այդ խորությունը մեջտեղից հորիզոնական ուղղությամբ տախտակներով (կեղծ հատակ) բաժանում են 2 մասի, ներքևի մասը լցնում են ձյունով կամ սառույցով, իսկ բաժանող կեղծ հատակի վրա ուղղահայաց դրությամբ և հակառակ դիրքով (հիմքերը վերև ուղղված) դարսում են կտրոնների խրճերը, վորոնց վրա վերելից խոնավ մամուռ կամ թեփ են փռում և 10—15 սմ. հողի շերտով մամուռը (կամ թեփը) ծածկում։ Դրանից հետո ամբողջ Ջերմոցը ծածկում են ապակե շրջանակներով (տես նկ. 16—17)։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, կտրոնների




Նկ. 16. Կտրոնների ստրատիֆիկացիա Ջերմոցում ըստ Բուզինի

ծայրերն ուղղված լինելով դեպի ձյան շերտը, գտնվում են համեմատաբար ցածր Ջերմության պայմաններում, մինչդեռ նրանց հիմքերը շրջանակներին մոտ լինելով, ստանում են բավական քանակությամբ Ջերմություն։ Նման պայմաններում կտրոններն արմատակալում են այն ժամանակ, յերբ դեռ նրանց աչքերը չեն բացվել (տես նկ. № 18)։ Կտրոնները նախապատրաստելու այս ձևը թեև քիչ բարդ է, բայց դրական խոշոր արդյունք է տալիս։

Ջերմոցներում կամ տաքացվող սենյակներում ստրատիֆիկացիան, ճիշտ է, լավ, նպատակովոր պայմաններ են ստեղծում կտրոնների հաջող արմատակալումն ապահովելու համար, վորի շնորհիվ տնկում տնկած այդ կտ-

րոնները դրուությամբ են կաշու և ուժեղ ու կանոնավոր զարգանում, սակայն նման ստրատիֆիկացիան, կապված լինելով խոշոր ծախսերի հետ (ջերմատուն, ջերմոցներ կառուցելը, վառելանյութեր և այլն) մի կողմից, և մյուս կողմից, ի նկատի ունենալով, վոր ավելի հասարակ միջոցներով դործնականապես ստեղծվում են կտրոնների լավ արմատակալում, դործնականում այնքան տարածված չեն




Նկ. 17. Կտրոնների ստրատիֆիկացիա ջերմոցում լերկացող կեղծ հատակով

դահայաց դրությամբ պահելու համար (տես նկ. 26): Այդ խրամատների մեջ կտրոնների խրճերը դարձում են ուղղահայաց դրությամբ, բայց հակառակ դիրքով, դարձելու հետ միաժամանակ խրճերի արանքները փութի հողով լավ լցնում են. դասավորելուց հետո կտրոնների հիմքերի վրա խոնավ մամուռ կամ թեփ են փռում, ապա՝ վերևից խրճերը խոնավ ավազով կամ հողով (լավ և սևահող վերցնել) ծածկում են (մոտ 10—15 սմ.): Մամուռ կամ թեփ չլինելու դեպքում, կարելի չե ուղղակի ավազով (հողով) միայն ծածկել: Այդ ձևի ստրատիֆիկացիան կատարում են հենց կտրոնները փերցնելու ժամանակ, աշնանը (ձմեռը) կամ գարնանը, նայած յերբ են այգիների հետ կատարում: Յեթե ստրատիֆիկացիան կատարում են աշնանը կամ ձմեռը, ապա գարնանը, ստրատիֆիկացիայից հետո, անհրաժեշտ և կտրոնները մի քանի օր ջուրը դնել, վորից հետո նոր տնկել, իսկ գարնանը ստրատիֆիկացիան կատարում են կտրոնները նախապես ջուրը դնելուց հետո, այս դեպքում ջրից հանած կտրոններն անհրաժեշտ և լինում ջրից քիչ ափով ցամաքեցնել (կտրոնները խրամատներում չնեխելու նպատակով) և

կտրոնների արմատակալումն արագացնելու և աչքերի բացումը հետաձգելու ամենից տարածված, եփան և հեշտ միջոցը կտրոնները բացողյա կամ ծածկի (չարդախի) տակ խրամատներում գլխավայր (հիմքերը վերև ուղղված) դիրքով պահելու ձևն և (ռուսերեն кильчевание): Այս ձևով կտրոնները նախապատրաստելու համար ընտրում են քամիներից պաշտպանված և դեպի հարավ նայող մի հարմար տեղ (ալատի հարավային կողմը և այլն), կամ ել ողորդորդում են տնտեսության մեջ յեղած վորևե ազատ ծածկ (չարդախ), վորի հարավային կողմը բաց պիտի լինի (իսկ հյուսիսայինը՝ ծածկած), վորպեսզի խրամատների հողը (ավազը) շատ ջերմություն ստանա: Ընտրած տեղում փորում են խրամատներ հենց նույն մեծության, ինչ մեծության հարկավոր և լինում կտրոնները սովորական ձևով (ուղ-

աղա խրամատներում դարձել: Պետք է հետևել, վոր խրճերի ծածկոցը (հող, ավազ, մամուռ և այլն) չչորանա, դրա համար ժամանակ առ ժամանակ (2—3 օրը մեկ անգամ) ծածկոցը ցնձուղով պիտի ջրել: Գարնան տոք յեղանակներին խրամատների ծածկոցը բավականաչափ տաքանում և, տաքանում են նաև խրճերը (գլխավորապես նրանց հիմքերը): Ջերմության և խոնավության շնորհիվ մի 3—4 շաբաթից հետո կտրոնների հիմքերի վրա տեղի չե ունենում կալլուսի առաջացումը, ավելի բարենպաստ պայմաններում (վոր կալված է յեղանակներից) կտրոններն անգամ արմատներ են արձակում: Կտրոնների աչքերի բացումն, այս դեպքում, բնական է, վոր հետաձգվում է, քանի վոր ծայրի աչքերը (հիմքի 2—3 աչքը ստրատիֆիկացիայի ժամանակ հեռացնում են), զբաղվելով հողի խորը շերտերում (խրամատների հատակին), քիչ ջերմություն են ստանում:



Կտրոնների արմատակալումն ել ավելի արագացնելու համար, կարելի չե խրամատները վերևից ջերմոցների շրջանակներով ծածկել այնպես, վոր շրջանակների և խրճերի ծածկոցի միջև վորոշ չափով (մոտ 10—15 սմ.) ազատ տարածություն լինի: Ստրատիֆիկացիայից հետո կտրոնները մեկ առ մեկ ստուգում են, նրանցից խոտանները և թույլերը հեռացնում և ապա ընտիր կտրոնները նշանակված տեղը տնկում:


Նկ. 18. Արմատակալած կտրոնների խուրճ

Կտրոնների նախապատրաստման այս ձևը (խրամատներում գլխավայր դիրքով պահելը) տարածված է Բեսսարաբիայում և խՍՀՄ-ի մի շարք այգեգործական շրջաններում (Ուկրաինա, Ղրիմ, Հյուսիսային Կովկաս և այլն): Մեզ մոտ այդ ձևը չի կիրառվում և այդ ուղղությամբ դեռ նոր փորձեր են դրվում (Այգեգործական փորձնական կայան), ուստի տնկելուց առաջ կտրոնները միայն ջրի մեջ են դնում և ապա թարմացում կատարում:

ՅԵ). Աչեքի (բողբոջների) հեռացնելը: Կտրոնները թարմացնելիս, կամ տնկելուց անմիջապես առաջ, շատ հաճախ կտրոնի բոլոր աչքերը, բացի վերին 2 աչքից, սուր դանակով կամ սեկատորով հեռացնում են: Այս դեպքում հեռացված աչքերի տեղերից (կտրվածքներից) ջուրը հեշտությամբ ներս է ծծվում կտրոնների մեջ և քիչ թե շատ չափով արագացնում վերջիններիս արմատակալման պրոցեսը: Մինչդեռ յեթե այդ աչքերը չեն հեռացնում և թողնում ենք կտրոնների վրա, ապա նախ՝ ջուրը համեմատաբար դանդաղությամբ և ներծծվում կտրոնների մեջ, և յերկրորդ՝ այդ աչքերը յերբեմն բացվում են հողի մեջ և շիվեր արձակում, վորոնք իրենց զարգացման համար կտրոններից վորոշ քանակությամբ սննդաբար նյութեր են վերցնում: Թե առաջին և թե յերկրորդ դեպքում, կտրոնների արմատակալման պրոցեսը վորոշ չափով հետաձգվում է: Սակայն, աչքերը հեռացնելու շնորհիվ, վոր-

քան հեշտությամբ ջուրն և ներթափանցում կտրոնների մեջ, նույնչափ հեշտությամբ կարող են մուտք գործել կտրոնների մեջ նաև վնասատու զանազան միկրոօրգանիզմներ (բուսական և թե կենդանական) և ֆուսել տնկած կտրոնները Անկախ սրանից, աչքերի հեռացնելը խոշոր նշանակու- թյուն ունի պատվաստի դեպքում. ամերիկյան պատվաստակալից հեռաց- նելով բոլոր աչքերը, նրանց վրա այլևս շիվեր չեն առաջանում, հետևապես նրանք չեն խանգարելու պատվաստի հյուսվածքի նորմալ զարգացմանը: Յեվրոպական (vitis vinifera) փոփոխականները բազմացնելու համար, վորոնք ընդհանրապես դյուրությամբ են արմատակալում, մանավանդ ջրարբի հո- դերում, կտրոնների աչքերը հեռացնելը դրական առանձին նշանակություն չունենալով և մեծ աշխատանք պահանջելով հանդերձ, յերբեմն կարող ե բացասական հետևանքներ ունենալ (կտրոնները կարող են նեխվել և փչա- նալ), հետևաբար, այս դեպքում, աչքերի հեռացնելը միանգամայն ավելորդ աշխատանք պիտի համարել: Ծիշտ են մոտենում այդ հարցին մեր այգեգոր- ծական խորհ. և կոլտնտեսությունները, յերբ տնկելուց առաջ կտրոնները նախապատրաստելիս, աչքերը չեն հեռացնում. մեր պայմաններում, վորտեղ այգիները վոռոգվում են, և վորտեղ տարածված են բացառապես vitis vinifera տեսակին պատկանող փոփոխականները (խարջի, ճիւլար, մախալի, մուսկատ և այլն), աչքերի հեռացնելը, կտրոնների արմատակալմանը նպաստելու համար, գործնական առանձին վոչ մի նշանակություն չունի: Այդ են վկայում Գյու- ղատնտեսական ինստիտուտի ուսումնական տնտեսությունում այգեգործու- կան ամբիոնի 1933 թվի այդ ուղղությամբ կատարած փորձերի նախնական, ամփայնելը:

2). Կեղեվառում: Կտրոնների արմատակալման պրոցեսը հեշտացնելու և արագացնելու նպատակով, այգեգործական վորոշ շրջաններում (գլխա- վորապես Փրանսիայի հարավում) կիրառում են կեղեկատում, վորը կայա- նում են նրանում, վոր կտրոնի հիմքի 1—3 միջնագույցների կեղևի վրա թեթև կտրվածքներ են առաջացնում: Կեղեվատումը կատարում են սուր դանակով կամ յերկաթից պատրաստված,



Նկ. 19. Լեյդեյի սղոցարգ կտրոնները կեղեկատելու համար

սղոցանման հատուկ գործիքների միջոցով, վորոնցից ամենատա- րածվածը Լեյդեյի սղոցարգն է (հասարակ մի գործիք է, վորը հնարավոր է պատրաստել ամեն մի տնտեսությունում): Այդ սղո- ցարգն ամրացնում են սեղանի կամ վորեկ արկղի վրա (տես նկ. 19), նրա ատամնավոր մասի վրա հենում են կտրոնի հիմքը (2—3 միջնագույց) և թեթև սեղմելով, կտրոնն արագությամբ պտտեցնում են, այնպես վոր կտրոնի հիմքի վրա թեթև կտրվ- վածքներ առաջանան և հիմքի աչ- քերը հեռացվեն: Կեղեկատումը կա- տարում են կտրոնները միջանի որ

մեջ, հետևապես արագացնում վերջիններին արմատակալման պրոցեսը: Սակայն, ինչպես կտրոններն աչքերը հեռացնելու շնորհիվ յերբեմն վա- րակվում են այս կամ այն հիվանդությունով և վնասվում, ապա նրանք նույնպես կարող են վնասվել նաև կեղեկատման շնորհիվ: Այս տեսակետից այն, ինչ վոր քիչ առաջ մենք ասացինք աչքերը հեռացնելու դրական և թե բացասական հետևանքների, (տես էջ 37), նույնը կարելի չե ասել նաև կեղեկատման մասին:

Ն. Կտրոնների վորոնք յեվ ջարդելը: Յերբեմն կտրոնների հիմքերը ձեռքով վորոքում են, կամ փայտե թակիչների ոգնությամբ, թեթև կերպով ջարդում, այլ խոսքով ասած, կտրոնների հիմքերի վրա ըստ յերկարության բավականի խոր վերքեր առաջացնում: Այդ վերքերի շնորհիվ, կտրոնները թեև դյուրությամբ են արմատակալում, բայց նորմալ զարգացում չեն ունենում և շատ հաճախ կարճ ժամանակից հետո փչանում են, վորովհետև առաջացած վերքերը նախ նպաստավոր պայմաններ են ստեղծում կտրոն- ներն այս կամ այն հիվանդությունով վարակելու համար և յերկարող՝ այդ նույն վերքերի միջոցով ջուրը կարողանում է թափանցել կտրոնների մի- ջուկի մեջ և վերջինս քայքայման յենթարկել: Այս տեսակետից կտրոնների վորոնք և ջարդելը միանգամայն անթույլատրելի պիտի համարել:

9. ԿՏՐՈՆՆԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՀԱՐՍԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ*)

Կտրոններ տնկելու ամենահարմար ժամանակը գարունն է, յերբ որբերը բավականաչափ տաքանում են: Կտրոնների կպչելու պրոցեսը սկսվե- լու համար լավ պայմաններ են ստեղծվում այն ժամանակ, յերբ հողն այն- քան է տաքանում, վոր նրա վերևի շերտի ջերմությունը հասնում է 15° և ավելի, ու յերբ տնկման խորության շերտում հողի ջերմությունը 10°-ից պակաս չի լինում: Մեր պայմաններում այդ սկսվում է հենց այն մոմենտից, յերբ վաղերը հանգստի շրջանից ակտիվ աշխատանքի յեն տնցնում և նրանց բրդրոշները բացվելու նշաններ են ցույց տալիս: Ահա այդ ժամանակաշրջանում տնկված կտրոնները, յերբեմն կպչելու պրոցեսը նախապատրաստելու համար, անհրաժեշտ նպաստավոր ջերմություն են ունենում: Մեր պայմաններում այգիների տնկման կամպանիան կարելի չե սկսել հենց կտրոնները վերցնելու ժամանակ, գարնանը, այգիներն ետելիս, միայն թե հիմնաշրջված հողն այնքան չորացած լինի, վոր հնարավորութ- յյուն տա տնկման աշխատանքներ կատարելու: Յերբ պիտի վերջացնել կտրոնների տնկման կամպանիան, այլ խոսքով ասած, վորքան տևողու- թյունն նա պիտի ունենա և վորն է նրա վերջին ժամկետը, վորից հետո տնկելը թյուլատրելի չէ: Ներկայումս, յերբ մի տնտեսության մեջ, սեզոնի ընթացքում հաճախ կարելի է լինում միջանի հարյուր հեկտար տարածու- թյամբ նոր այգիներ հիմնադրել, հնարավոր չե խիստ կերպով սահմանա- փակել տնկելու ժամանակամիջոցը, մանավանդ, վոր առանց վորեկ մեծա հասցնելու կտրոնների կպչելուն ու նրանց հետագա զարգացմանը, հնարա- վորություն կա տնկման կամպանիայի տևողությունը շատ թե քիչ չափով յերկարացնելու, միայն մեկ պայմանով, վոր մինչ տնկելը, կտրոնները լավ

*) Այստեղ հարցը վերաբերում է միայն չարմատակալած կտրոններին. արմատակա- լածները (շեղակներ) մեծ հաջողությամբ կարելի չե տնկել թե գարնանը և թե աշնանը:

պահանջներն և իրենց թարմութիւնը չկորցնեն (տես եջ 26 և 31)։ Մակայն սա չի նշանակում, վոր վողջ դարնան ընթացքում և ամառը կտրոններ կարելի չի տնկել։ Պետք է նկատի ունենալ այն, վոր չափից դուրս յերկարացնելով տնկման կամպանիան, կարճացնում ենք կտրոնների վեգետացիոն (աճեցողութիւն) շրջանը, վորի հետեանքով ուշ տնկած կտրոնների շիվերը թույլ են զարգանում, կարճ են լինում, կանոնավոր չեն հասունանում, հաճախ չեն փայտանում, և անգամ թաշելու դեպքում նրանք ձմռան սառնամանիքներին չեն դիմանում և հեշտութեամբ փչանում են։ Տնկման ժամկետները վորոշելիս, այդպէս ծախան ամեն մի տնտեսութիւն հաշիւ պիտի առնի իր կոնկրետ պայմանները և աշխատանքներն այնպես դասավորի, վոր տնկման կամպանիան չենք վերը նշած ժամկետին սկսի, վորպէսզի այդ կարեւոր կամպանիան ժամանակին վերջացնի և թե կտրոնների տնկման պլանը լրիւ կատարած լինի։ Հարավային լանջերում, ինչպէս և թեթև ու հեշտութեամբ տաքացվող հողերում, տնկման կամպանիան համեմատաբար ավելի շուտ պիտի սկսել, քան հյուսիսային լանջերում և ծանր հողերում։ Առաջին հերթին պիտի տնկել այն կտրոնները, վորոնք ստրատիֆիկացիայի չեն յենթարկվի և վորոնց վրա արհեստական յեղանակով արմատներ չենք առաջացրել։ Ստրատիֆիկացիայի յենթարկված կտրոնները կարելի չի ուշ տնկել, վորպէսզի հողն ել ավելի տաքանա և նրանց արմատները հողում չմըսեն։ Մեր այդպէս ծախան շրջաններում կտրոնների տնկման կամպանիան, նայած տարվա ոգերեւութաբանական պայմաններին, կարելի չի սկսել ապրիլի սկզբներին, անգամ մարտ ամսի վերջերին և վերջացնել մայիսի մոտավորապէս 1—15. տնկման կամպանիան մեզ մոտ տեղւմ է մոտ մեկ ամիս, կամ քիչ ավելի։ Հարավային շրջաններում, բացառիկ դեպքերում, և աշնան տնկելը կարող է գործնական նշանակութիւն ունենալ, բայց դրա համար աշնան յեղանակները նպաստավոր պիտի լինեն, սառնամանիքները շուտ չսկսվեն, վաղերի մատերը շուտ փայտանան, ձմեռը սաստիկ չլինի, հողը շատ խոնավութիւն չպարունակի և այլն. ներկայումս համարյա վոչ մի տեղ աշնանը կտրոններ չեն տնկում։ Մասնավորապէս մեր պայմանների համար, վորտեղ կտրոնները դարնան են պատրաստում, աշնան տնկելը, մեր կարծիքով, գործնական և վոչ մի նշանակութիւն չունի. դարնան տնկելու հետ համեմատած, նա վոչ մի առավելութիւն չունենալով հանդերձ, մի շարք ավելորդ աշխատանքներ է պահանջում, ինչպէս, որին ալ տնկած կտրոնների թաղելը և բացելը, աշնանը կտրոններ պատրաստելը (վերցնելը), վոր անհամեմատ ավելի դժվար է (տերեւները խոնաւ դարում են), քան դարնանը և այլն։

10. ԿՏՐՈՆՆԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՏԵՂԸ

Կտրոնները կարելի չի տնկել՝ կամ նոր գցվող այգիներում, հենց անմիջապէս իրենց տեղերում, կամ տնկարանում։ Ինքնըստինքյան հասկանալի չի, վոր առաջին դեպքում կտրոնները տնկած տեղերից չեն շարժում, այլևս ուրիշ տեղ չեն փոխադրում։ Կտրոնները հենց նույն այդ տեղերում աճելով, կանոնավոր վաղեր են դառնում ու բերք տալիս. յերկրորդ դեպքում՝ կտրոնները խիտ-խիտ տնկում են հատուկ տնկարաններում, վորտեղ նրանք արմատակալում են ու շիվեր տալիս, և ապա միայն մեկ հազվադէպ դեպքում

քում Ձ տարուց հետո այդ կտրոնները, վորպէս արմատակալածներ (շիշակներ, ջիւտաթայ, յերինջներ) հիմնական տեղը (նոր գցվող այգի) փոխադրում։ Այստեղից հարց է ծագում—նպատակահարմար չե՞ արդոք կտրոններն ուղղակի հիմնական տեղում, նոր գցվող այգիներում տնկել, ավելորդ աշխատանքներ չե՞ն արդոք տնկարաններ կազմակերպելը և այդ տնկարաններում կտրոններ տնկելը*)։ Անշուշտ, կտրոնները հիմնական տեղում տնկելու դեպքում, մենք ազատվում ենք տնկարան կառուցելու, արմատակալած կտրոնները տնկարանից հանելու և նրանք հիմնական տեղում (նոր գցվող այգի) տնկելու աշխատանքներից։

Բացի դրանից, յիթե միևնույն հողային ու կլիմայական պայմաններում միատեսակ կտրոններ ենք տնկում հիմնական տեղում և տնկարանում և նրանց վողջ վեգետացիոն ընթացքում միատեսակ խնամում, հիմնական տեղում կտրոնները, նորը դասավորված լինելու շնորհիւ, համեմատաբար ուժեղ են աճում, քան տնկարանում խիտ տնկած կտրոնները. ավելին, միատեսակ աճեցողութեան դեպքում անգամ, տնկարանից հանած և հիմնական տեղը փոխադրած արմատակալածները իրենց աճեցողութեան տեսակետից, միևնույն պայմաններում վորոշ ժամանակով հետ են մնում այն արմատակալածներին, վորոնք հենց սկզբից, վորպէս սովորական կտրոններ, տնկված են յեղել և մշակվել ուղղակի հիմնական տեղում։ Ահա թե ինչ առավելութիւններ ունի հիմնական տեղում կտրոններ տնկելը։ Յեթե դրված հարցի լուծմանը մենք մոտենանք միայն հիմք ընդունելով այդ առավելութիւնները, ապա պիտի ընդունել, վոր տնկարանները միանգամայն ավելորդ են։ Հենց այդպէս են հիմնավորում նրանք, ովքեր խորհուրդ են տալիս ֆիլոքսերայից ազատ վայրերում (վորտեղ վաղերը կտրոնների միջոցով են բազմացնում), կտրոնները հիմնական տեղում միայն տնկել և այդ վայրերի համար տնկարաններ կազմակերպելը անողում մի աշխատանք են համարում։ Սակայն տվյալ հարցի լուծմանը նման ձևով մոտեցումը միակողմանի չի և նա միանգամայն անթույլատրելի պիտի համարել։ Անհրաժեշտ է հաշիւ առնել յուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ շրջանի (անգամ առանձին տնտեսութեան) հողային ու կլիմայական կոնկրետ պայմանները, վորոգման հնարավորութիւնները, ինչպէս է ազդոտելանիկական մի շարք կարեւորագույն մոմենտներ և ապա միայն վորոշել, վորտեղ նպատակահարմար և ձեռնտու չի կտրոնները տնկել, հիմնական տեղում, թե՞ տնկարանում։

Ճիշտ է, խաղողի վաղը հողի նկատմամբ ընդհանրապէս պահանջկոտ չէ (ամերիկական տեսակները վորոշ չափով բացառութիւն են կազմում). նա աճում է ամեն տեսակ հողում, նմանապէս կտրոնները ևս կարող են արմատակալել ու զարգանալ ամեն մի հողում։ Սակայն միևնույն չէ, թե կտրոնները կզարգանան փութիւր, թե պինդ, հարուստ, թե աղքատ հողերում։ Կտրոնների արմատակալման և առաջին տարվա աճեցողութեան համար հողը վճռական դեր է խաղում։ Հարուստ և փութիւր հողերում կտրոնները

*) Ինքնըստինքյան հասկանալի չի, վոր այստեղ հարցը վերաբերում է վաղերը կտրոններ միջոցով բազմացնելու յեղանակին միայն (այդ է սույն գրքույկի նպատակը), այլ վոչ թե պատկառմանը ֆիլոքսերայով վարակված շրջաններում, վորտեղ վաղի մշակութիւնը տարվում է ամերիկյան պատկառմանի վրա, այգիները հիմնադրում են միայն տնկարաններ միջոցով։ Պատկառմանը նախորդ դաստիարակում են տնկարաններում և ապա հիմնական տեղը փոխադրում։ ՅԵ. Ա.

մեծ հաջողութեամբ են արմատակալում և հենց առաջին տարվա ընթացքում ուժեղ արմատներ ու շիվեր են ունենում, մինչդեռ աղքատ և պինդ հողերում, նախ նրանց զգալի տոկոսը չի կաշուում և բացի դրանից, կպած (արմատակալած) կտրոններն այնքան թույլ են աճում, վոր հազիվ յերկրորդ տարին առաջինների առաջին տարվա աճեցողութեամբ հասնում, Հետևաբար անհրաժեշտ է ամեն կերպ աշխատել, վոր կտրոնները լավ պայմաններում գտնվեն, վորպեսզի հաջող արմատակալեն և հնարավորին չափ ուժեղ զարգանան, դրա համար, հենց առաջին հերթին, կտրոններին հատկացվելիք հողը պարարտ և փուխը պիտի լինի: Այս տեսակետից, յեթե նոր գցվող այգիների հողը պարարտ և փուխը է, ապա կտրոնները կարելի յե տնկել հենց հիմնական տեղում, իսկ յեթե այգիները հիմնադրվելու յեն պինդ, աղքատ, քարքարոտ հողերում, կտրոնները նպատակահարմար է տնկել տնկարանում, վորի համար միշտ էլ հնարավոր է լավ հող հատկացնել, քանի վոր նա փոքր տարածութեամբ է ունենում, վորպիսի տարածութեամբ տնտեսութեան ամենալավ հողերից միշտ կարելի յե ապահովել: Մեր պայմաններում մեկ հեկտարի տնկարանը ապահովում է արմատակալածներով մոտ 25 հեկտար տարածութեամբ այգիներ տնկելու համար (մեկ հեկտար տնկարանից ստացվում է մոտ 75 հազար արմատակալածներ, իսկ մեկ հեկտար այգի տնկելու համար պահանջվում է մոտ 3 հազար արմատակալածներ): Շատ հաճախ այգիները հիմնադրում են հենց չոր, քարքարոտ և աղքատ հողերում, վորոնք կուտուրական շատ բույսերի համար անպիտք են. նման հողերում, մանավանդ փոքրիկ պայմաններում, կտրոնները հիմնական տեղում տնկելը, ինչպես սասցինք, նպատակահարմար չէ և տնկարանների հետ համեմատած վոչ միայն առավելութուններ չունի, այլև մի շարք ավելորդ աշխատանքներ է պահանջում: Այդ հիմնավորելու համար կանգ առնենք հետևյալ կարևոր հանգամանքների վրա:

1. Կտրոնները անհաջող են արմատակալում, նրանց զգալի մասը (մոտ 30%)⁰ անգամ ապելի) չի կաշում: Դրա հետևանքով հաջորդ տարին, կամ նույն աշնանը, այգիների նորոգման (բեմոնտի) համար մեծ աշխատանք ու ծախսեր է պահանջվում: Յեթե ընդունենք, վոր տնկած կտրոնների 70%⁰-ն է կպած լինում, ապա դա կնշանակի, յոր քառասունը 100 հեկտար տնկած տարածութեանից, 30 հեկտարը նորից պիտի տնկել (բաց տեղերը լրացնել), մի աշխատանք, վոր առայժմ մեծ նշանակություն չի յենթարկված և ձեռքով է կատարվում: Մինչևեռ նույն պայմաններում արմատակալածները (շիշակներ) տնկելու դեպքում, նորոգման աշխատանքները զգալի չափով կրճատվում են, հազիվ թե տնկած տարածութեան 5—10%⁰-ը նորոգելու լինենք: Մեզ կարող են առարկել, վոր մեկ անցքի (փոսի) մեջ դույզ կտրոններ տնկելով, նույնպես հնարավոր է այդ նորոգման աշխատանքները կրճատել: Դա մասամբ ճիշտ է: Բայց չե վոր հաջորդ տարին այդ դույզներից մեկականները հանելու համար հսկայական աշխատանք է պահանջվում և բացի դրանից, հանելու ընթացքում տեղում թողնվելիք արմատակալածի արմատները վերավորվում են: Այստեղ ևս կարող է առարկուել յոն լինել այն իմաստով, վոր կպած դույզներից մեկականները փոխանակ հանելու, կարելի յե նրանք (ավելորդներից) հիմքից կտրել և վոչնչացնել: Դա արդեն միանգամայն անթույլատրելի պիտի համարել հենց այն տեսակետից, վոր ներկայումս ուժեղ

աւելելով վարդացող այգեգործութեանը մեր առաջ հիմնադրվողներ այգիները անկանյութով ապահովելու լուրջ խնդիր է դնում. այդ նոր պահանջը բավարարելու համար, մենք ամեն մի պիտանի կտրոն հաշվի պիտի առնենք և տեղին ոգտագործենք:

2. Վորոգվող շրջաններում, այդ նույն հողային, կլիմայական ու չոր պայմաններում, կտրոններն արմատակալելու ու զարգանալու համար, սեզոնի ընթացքում հաճախ 12—18 անգամ ջրելու կարիք է զգացվում (այդպես է նաև մեր դոնրի պայմաններում), հետևաբար կտրոնները տեղում տնկելու դեպքում, մեծ քանակութեամբ ջուր է պահանջվում, մինչդեռ նույն քանակութեամբ կտրոնները տնկարանում տնկելու դեպքում, պահանջվող ջրի քանակը մոտ 20—25 անգամ կրճատվում է: Արմատակալածները հիմնական տեղում տնկելու դեպքում 12—18 անգամ ջրելու փոխարեն, բավական է լինում 6—10 անգամ միայն ջրել: Իսկ այս հանգամանքը, մանավանդ փոքրիկ, բայց ջրասակավ շրջանների համար, կարևոր է այն տեսակետից, վոր տնտեսութեանը միևնույն քանակութեամբ ջուր ստանալու դեպքում, հնարավորութեամբ ունի մոտ 2 անգամ ավելի տարածութեան ջրով ապահովելու, յեթե զցվելիք այգիների համար, վորպես տնկանյութ արմատակալածներ ոգտագործի, այլ վոչ թե սովորական կտրոններ:

3. Չոր, քարքարոտ, աղքատ հողերում, ինչպես սասցինք, կտրոնները թույլ են աճում, նրանց շիվերն առաջին տարին նվազ և կարճ են լինում, լավ չեն փայտանում, դրա հետևանքով վտեղերը հաջորդ տարին նույնպես թույլ աճեցողութեամբ են ունենում:

Այս բոլորը միաժամանակ պարզ ապացուցում են այն, վոր այգին աղքատ, քարքարոտ հողերում և չոր կլիմայական պայմաններում հիմնադրելու դեպքում, կտրոնները տնկարանում տնկելն ունի խոշոր առավելութուններ: Բացի այդ առավելութուններից, տնկարաններն ունեն նաև մի շարք այլ առավելութուններ, վորոնցից այստեղ կնշենք կարևորները՝

1. Տնկարանների շնորհիվ մենք հնարավորութեամբ ենք ունենում այգիներ տնկել նաև աշնանը, անգամ այն շրջաններում, վորտեղ աշնանը կտրոններ տնկելը հաճախ հնարավոր չի լինում: Դրա համար կտրոնները դարնանը տնկում են տնկարանում և ապա աշնանը, նրանք վորպես արմատակալածներ հիմնական տեղը փոխադրում:

2. Տնկարանները, փոքր տարածութեաններ բռնելով, միշտ էլ հնարավոր է լինում պարարտացնել և կտրոններն արմատակալման և աճեցողութեան լավ նպաստավոր պայմանների մեջ դնել: Բնական նույն քանակութեամբ կտրոնները հիմնական տեղում, աճեցողութեան և արմատակալման նույն պայմանների մեջ դնելու համար, անհամեմատ ավելի շատ պարարտանյութ ու աշխատանք է պահանջվում: Բացի դրանից, միևնույն քանակութեամբ կտրոններ հիմնական տեղում խնամելու համար մոտ 20—25 անգամ ավելի աշխատանք ենք կատարում, քան տնկարանում, վոր, ի հարկե, չի կարող ավելի չլինել կտրոնները տնկարանից հանելու և հիմնական այգում տնկելու աշխատանքներից, մանավանդ, վոր վերջիններս արդեն մեքենայացման են յենթարկվում:

3. տնկարաններում ոգտագործվում են նաև թույլ, կարճ և կտակածելի (վորակի տեսակետից) կտրոններ, վորպիսի կտրոններ հիմնական տեղում տնկելն անթույլատրելի յե համարվում. հետևաբար կտրոնները անկարա-

նույն խնայողութեան են ոգտագործվում, իսկ դա հնարավորութիւնն է ստեղծում ցանկացած, մասնավաճառ թանկարժեք փոփոխականները (վորոնց կտրոններն հաճախ խիստ պակասութիւնն են զգացվում) կարճ ժամանակամիջոցում մեծ քանակութեամբ բազմացնել և պլանով նախատեսած տարածութիւնը տնկանյութով լրիւ ապահովել:

4. տնկարանը լավ միջոց է նորատունկ այգիները ժամանակին նորոգելու համար:

5. տնկարաններում հեշտ և փոփոխականներն պիտակավորում անցկացնել, վոչ ցանկալի փոփոխականները հիմնականներին զատելու նպատակով և այսպիսով իր ժամանակին շտկել մայր այգիներում վաղերի պիտակավորման (տես եջ 21) ժամանակ բաց թողած սխալները և հիմնական տեղում մաքուր փոփոխականներ միայն տնկել:

Այս բոլորը գալիս են ապացուցելու, վոր կտրոնների տնկելու տեղը (տնկարան, թե հիմնական տեղ) ճիշտ կերպով վորոշելու հարցը նորատունկ այգիների հաշտութեան կարևորագոյն և պատասխանատու նախադրյալներին մեկն է և պահանջում է զգուշացնել այգիներին հատկացվելիք տեղի ուղայմանների բազմակողմանի ուսումնասիրութիւն: Անհրաժեշտ է վերև բերված դիտողութիւնները մեկ առ մեկ հաշիւ առնել և ըստ այնմ պարզել տնկարանում, թե հիմնական տեղում կտրոնները տնկել: Մեզ մոտ մինչև 1932 թիւը գործախտաբար կտրոնները տնկում էին բացառապես հիմնական տեղում: Սակայն, ներկայումս, յերբ այգեգործութիւնը զարգացման ուրազ վերելք է հուժկու թափ է ստանում Միութեան այգեգործական վողջ շրջաններում և ըստ Խ. Հայաստանի Հոգեօղկոմատի տվյալների յերկրորդ հնգամյակի հնթացքում մեղնում միայն մոտ 8 հազար հեկտար տարածութեամբ նոր այգիներ պետք է հիմնադրել մի կողմից և մյուս կողմից, վոր մեղնում այգեգործութիւնը զարգանալու յի հատկապես դերի պայմաններում, յերբ հարց է դրվում նույնիսկ աշնան տնկման մասին, ապա այս դեպքում լինչպես կարելի յի անտեսել տնկարանների կարևոր նշանակութիւնը: Ի նկատի ունենալով այդ և մի շարք այլ պայմաններ, ինչպես դերի հողերը, վորոգումը և տնկարանի վերը հիշած առավելութիւնները, Խ. Հայաստանի Հոգեօղկոմատը մեղնում տնկարաններ կազմակերպելու մասին հատուկ վորոշում կայացրեց, ընդ վորում հիմնադրվելիք այգիների մի մասն այժմ տնկում են տնկարանների միջոցով:

Այսպիսով մեր պայմաններում կտրոնները տնկում են թե հիմնական տեղում և թե տնկարանում:

III. ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԱՄԳԸ

1. ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնկարան կազմակերպելու սկզբնական կարևոր աշխատանքներից մեկը տեղի և հողի ընտրութիւնն է: Տեղի հաշիւ ընտրութիւնը բացառիկ դրական նշանակութիւն ունի ապագայում մշակվող կտրոնների զարգացման համար. հաշիւ ընտրած տեղը կտրոնների արմատակալման ու կանոնավոր աճեցողութեան ամենալավ զբաղակաճն է հանդիսանում: Այս տեսակետից տեղի ընտրութեան վրա առանձին լուրջ ուշադրութիւն պիտի դարձնել: Այդ ընտրո-

թիւնը պիտի կատարվի հողի և միջավայրի նախնական ամենամանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրութիւնների հիման վրա, վորոնք պիտի պարզեն՝ ընտրվելիք տեղի դիրքը, եքսպոզիցիան, միկրոկլիմայական առանձնահատուկ պայմանները, վորոգման հնարավորութիւնները, ջերմութեան ու լույսի պայմանները, տվյալ տեղում տիրապետող քամիների ուժը և ուղղութիւնը, հողի ֆիզիկական և քիմիական հատկութիւնները, ստորերկրյա ջրերի բարձրութիւնը, տնկարան կազմակերպելու նախնական անհրաժեշտ աշխատանքների չափն ու ծախսը և ագրոտեխնիկական մի շարք կարևոր պայմանները: Այս բոլոր կարևոր խնդիրները նպատակահարմար է պարզել հատուկ կոմիսիայի միջոցով, մասնավաճառ յիթե տնկարանը մեծ տարածութիւնն է բռնելու և վերջինս արմատակալածներով այգեգործական միջանի տնտեսութիւններն է սպասարկելու:

Տնկարանի համար պետք է ընտրել հնարավորին չափ հարթ, բարձր դիրք ունեցող, ստորերկրյա ջրերից ազատ տեղ: Ցանկալի յի, վոր ընտրած հողամասը, քիչ. թեքութիւնն ունենա դեպի հարավ, համեմատ դեպս նա պետք է պաշտպանված լինի հյուսիսային և հյուսիս-արևելյան ցուրտ քամիներից, վորպեսզի այդ քամիներից մատղաշ տնկիները չտուժեն և կանոնավոր աճեն: Վորոգվող շրջաններում ընտրած հողամասը չլրով ապահովված պիտի լինի այն հաշիւով, վոր վողջ վեղետացիոն ընթացքում, հարկ յեղած դեպքում, տնկարանին բավարար չափով ջուր տրվի: Տնկարանի հողը փութը, ուրարտ և հեշտ տաքացվող պիտի լինի, հնարավորին չափ հեշտութեամբ մշակվի: Այդ պայմաններին համապատասխանում են հումուս պարուհակող թեթև ավաղային, և կամ կավա-ավաղային հողերը, վորտեղ կտրոնները դյուրութեամբ են արմատակալում և կանոնավոր զարգանում: Տնկարանների համար ծանր, խոնավ և սառը կավահողերն, ինչպես և կրային և քարքարոտ հողերը հարմար չեն, վորովհետեւ նրանք վոչ միայն դժվարութեամբ են մշակվում, այլև հետաձգում են կտրոնների կաշիւ պրոցեսը: Նման հողերում կտրոնները թույլ են աճում և նրանց շիվերը հաճախ լավ չեն յիայտանում. հիմնական տեղը փոխադրելիս, այդ արմատակալածներից շատերը չեն կաշում և փչանում են:

2. ՏՆԿԱՐԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄԸ

Տնկարանի տերիտորիայի չափը պայմանավորված է տնկանյութի (արմատակալածների) այն քանակով, վորը պետք է արտադրի տվյալ տնտեսութիւնը, յիւնիով պետութեան կողմից նրան տված պլանային առաջադրանքից: Տնկարանի տերիտորիայի կազմակերպումը պետք է ապահովի՝

1. տնկարանում կատարվելիք ագրոտեխնիկական աշխատանքների մաքսիմալ դյուրացում:
2. արտադրական աշխատանքների մաքսիմալ մեղնայացում:
3. աշխատանքի բարձր արտադրողականութիւն:
4. արտադրվող պրոդուկցիայի (տվյալ դեպքում արմատակալածների) միւնիմալ ինքնարժեք:
5. հաշիւառելի մաքսիմալ պարզեցում:

Ցանկալի յի, վոր տնկարանի վողջ տերիտորիան տնտեսութեան մեկ համատարած մասսիւ կազմի և նա մի քանի տեղ ցրված չլինի: Տնկարանին հատկացվելիք վողջ տարածութիւնը բաժանում են մի շարք արտադրական

վանդակների (клетки), վորոնք իրարից բաժանված են լինում 5 մետրանոց լայնությամբ ճանապարհներով: Տնկարանի արտադրական վանդակների մեծությունը կախված է տեղի ընկնելից, տնկարանի մեծությունից, վոտոգման պայմաններից և ագրոտեխնիկական այլ խնդիրներից: Ներկայումս արտադրական վանդակի ամենահպատակահարմար տարածությունը խոշոր տնկարանների համար ընդունված է 5 հեկտար, ընդվորում յուրաքանչյուր վանդակ ունենում է 100 մետր լայնություն և 500 մետր յերկարություն:

Արտադրական վանդակներում տնկարանի շարքերը դասավորում են ըստ վանդակի լայնության այնպես, վոր այդ շարքերը 100 մետր յերկարություն են ունենում, և պիտի աշխատել, վոր նրանք (շարքերը) հարե-վան վանդակի շարքերի շարունակությունը կազմեն: Շարքերի նման դասավորություն ունի այն առավելությունը, վոր հնարավորություն է տալիս ավելի նպատակահարմար ձևով ոգտագործել մեքենաներն ու անհրաժեշտ գործիքները: Շարքերը տեղում վերջնականապես նշանակում են հողը նախապատրաստելուց հետո՝ տնկելուց առաջ, կամ տնկելու ժամանակ: Յեթե տնկարանն այնքան մեծ է, վոր մոտ 50 հեկտար և ավելի տարածություն է բռնում, ապա նպատակահարմար է մի քանի (5—10) արտադրական վանդակից արտադրական հողաբաժիններ (производственные участки) կազմակերպել, վորոնք իրարից բաժանվելու յեն 7 մետրանոց լայնությամբ ճանապարհներով: Այս բոլոր աշխատանքները տեղում կատարելու համար, պետք է նախորոք հանել տեղի հատակագիծը (պլանը): Ինքնուստինքյան հասկանալի յե, վոր արտադրական թե վանդակների և թե հողաբաժինների նշած չափերը, ինչպես և վանդակներում շարքերի յերկարությունն ու նրանց ուղղությունը՝ նայած տեղի հարմարության, վոտոգման հնարավորությանը և այլն, կարող են վորոշ վոտոտեխնիկական յենթարկվել: Մասնավորապես վոտոգվող պայմաններում և տեղի թեքության դեպքում, շարքերի թե յերկարությունը և թե ուղղությունը պետք է հարմարեցրած լինի հողը կանոնավոր կերպով ջրելու պայմաններին: Ասել է թե շարքերն այնպես պիտի դասավորված լինեն, վոր ջուրը շարքերի մեջ հեշտությունը, բայց հանդարտ ու համաչափ հոսի, հողը չվորոդի և դյուրությունը հողի մեջ թափանցի: Դրա համար շարքերը շատ չնչին թեքություն պիտի ունենան, վորպիսի թեքություն, նայած հողի կառուցվածքին, 0,001—0,005-ից ավելի չպիտի լինի, այսինքն, յեթե շարքի յերկարությունը 100 մետր է, ապա նրա սկիզբն առնող մասի բարձրությունը շարքի մյուս (ցածր) ծայրից, 0,1—0,5 մետրից ավելի չլինի, մասնավորապես պայմանների համար—թեքության նման սահմանումը միանգամայն անհրաժեշտ է, հենց դրա հիման վրա պետք է դասավորել շարքերը, տալով նրանց համապատասխան ուղղություն և յերկարություն: Յեթե տնկարանի հողը բավական թեքություն ունի, շարքերի գծագրումը պետք է հողաշինարարին հանձնել:

Փոքր տնկարանների (մի քանի հեկտար) տարածությունը պիտի բաժանել ուղղակի մեկ հեկտարանոց վոտոդակների, ապահովելով վերջիններս անհրաժեշտ ճանապարհներով: Վոտոգվող շրջաններում տնկարանի տերիտորիայի կազմակերպման ժամանակ առանձնապես հատուկ ուշադրություն պիտի դարձնել վոտոգիչ գլխավոր և թե յերկրորդական ցանցի կազմակերպման ու նրանց կառուցման վրա, ստեղծելով յուրաքանչյուր վանդակի համար կանոնավոր վոտոգման պայմաններ: Այս բոլորից հետո պետք է անցնել տնկարանին հատկացրած հողի նախապատրաստման աշխատանքներին:

3. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ենք արդեն ասացինք, թե ինչպիսի տեղ և ինչպիսի հող պետք է ընտրենք տնկարանի համար: Սակայն ինչպիսի տեղում էլ վոր տնկարան կազմակերպենք և ինչպիսի հող էլ վոր նրա համար ընտրած լինենք, պետք է, նախ քան կտրոններ տնկելը, մի շարք կարևոր աշխատանքներ կատարենք ընտրած հողամասի վրա:

1. Յեթե վերջինիս վրա մացառներ, թիուտներ, կամ հին վաղեր կան, ապա առաջին հերթին անհրաժեշտ է նրանք հիմնովին արմատախիլ անել, հողի միջից դրանց արմատները հավաքել և հողն այդ բույսերից բոլորովին ազատել: Այդ կարևոր է մի կողմից այն տեսակետից, վոր հնարավորություն ենք ստանում հողը հետագայում կանոնավոր մշակելու, մյուս կողմից կտրոններն ազատում ենք արմատային փտախտից, յեթե վերջինովս վարակված են յեղել հիշյալ բույսերը:

2. Պատահում է, վոր ընտրած հողամասի վրա քարեր են լինում, վորոնք արգելք կարող են հանդիսանալ հետագա հողային աշխատանքների նորմալ ընթացքին, կտրել հողամասում ոգտագործվող մեքենաներն ու գործիքները, կամ գցել վերջիններիս աշխատանքի արտադրողականությունը: Նման քարերը պետք է հավաքել ու հողամասից դուրս հանել: Նույնը պետք է անել նաև հողը հիմնաշրջելու ժամանակ:

3. Այս աշխատանքները կատարելուց հետո հողամասը պետք է հարթել: Անգամ հարթ հողամասերում տեղ-տեղ դար ու փոսեր են պատահում, պետք է այդ դար տեղերը քանդել, փոսերը լցնել ու հարթել: Դա մի կողմից կընպաստի հողի հետագա կանոնավոր վոտոգմանը և մյուս կողմից կհեշտացնի հողամասում կատարվելիք աշխատանքները:

4. Այնուհետև պետք է տնկարանի ամբողջ հողը հիմնաշրջել, այսինքն՝ վորոշ խորությունը հողը պետք է շուռ առլ այնպես, վոր հողի յերեսի հարևան մասն ընկնի տակը, իսկ տակի աղքատ մասը՝ վերև: Բացառություն կարող են կազմել այն հողերը, վորոնք շատ փուլեր են (ավաղահողեր) և վորոնց ստորին ու վերին շերտերը միատեսակ արժեք են ներկայացնում, նման դեպքում շրջելու փոխարեն, հողը կարելի յե ցանկացած խորությամբ միայն փախեցնել (խորը փախեցում), առանց շուռ տալու նրա շերտերը: Հիմնաշրջման նպատակն է նպաստավոր պայմաններ ստեղծել կտրոնների հաջող արմատակալման և դարգացման համար: Հիմնաշրջման խորությունը կախված է տեղի կլիմայական և հողային պայմաններից: Հարավային հոր շրջաններում, վորտեղ թե ողի և թե հողի խոնավությունը պակաս է լինում, իսկ ջերմությունը բարձր, հիմնաշրջումն ավելի խորը պիտի կատարել, միջին հաշվով 40—50 սմ: Հյուսիսային խոնավ և ցածր ջերմության շրջաններում, հիմնաշրջումը համեմատաբար պակաս խորությամբ են անում (տես եջ. 16), սակայն 30 սմ-ից վոչ պակաս: Մեր պայմաններում տնկարանի հողը պետք է հիմնաշրջել մոտ 40—50 սմ, խորությամբ: Հիմնաշրջումը կատարում են աշնան և ամառվա ամիսներին, իսկ վորտեղ հընարավոր է՝ նաև ձմեռը: Մայրահող դեպքում հիմնաշրջում են նաև դարնանը, հենց կտրոնները տնկելու ժամանակ, դա, ի հարկ է, լավ չե: Պիտի աշխատել հիմնաշրջման աշխատանքները դոնե 1,5—2 ամիս առաջ ավարտել, վորպեսզի հիմնաշրջված հողն այդ ժամանակամիջոցում բավականաչափ նըստի և պատրաստ լինի կտրոնները տնկելու համար:


Հիմնաշրջումը կարելի չէ կատարել

- ա) հատուկ դուրսանքների միջոցով (մեքենայական հիմնաշրջում)։
բ) ձեռքով—բահերի, քլուսգների, յերկաթանիգների (լոմերի) միջոցով
գ) պայթեցման միջոցով։

Այս ձևերից առավելագույն ազդեցություն հիշատակում են հանդիսա-
նում մեքենայական հիմնաշրջումը, վորը համեմատած հիմնաշրջման վերջին
յերկու ձևերի հետ, ունի մի շարք առավելություններ, վորոնց շնորհիվ
առաջին հերթին մեծ չափերով կրճատվում են հիմնաշրջման աշխատանքները
կատարելու համար թե պահանջվող բանվորական ձեռքերի թիվը և թե ան-
հրաժեշտ ծախսերի չափը. բացի դրանից, այդպիսի շրջման մեջ յեղած այդ
ամենածանր աշխատանքն անհամեմատ ավելի արագ է ընթացք և ստանում
Մեքենայական հիմնաշրջման համար շարժիչ ուժ էն ծառայում դանադան
տիպի տրակտորներ, շրջեքարներ, ելեկտրոններդիա և այլն։ Ներկայումս
ԽՍՀՄ-ում կիրառվում են գլխավորապես մեքենայական հիմնաշրջում. բացա-
ռիկ դեպքերում, այն ել խիստ քաղաքակրթ տեղերում և լանջերում, հիմնա-
շրջման աշխատանքները կատարում են ձեռքով կամ պայթեցման միջոցով։
Խորհրդային Հայաստանում հիմնաշրջման աշխատանքները կատարում են
թե տրակտորների միջոցով և թե ձեռքի, նաև ելեկտրականության միջոցով։
Հիմնաշրջման աշխատանքները ելեկտրականության միջոցով մեղ մոտ սկսվել
են 1932 թվից, խորհրդ. III-րդ տնտեսականությանում, վորտեղ ներկայումս լայն
ծավալ են ստացել և դրական խոշոր արդյունք են տալիս։

5. Յեթե հողն աղքատ է, ապա պիտի պարարտացնել. լավ է որդանա-
կան պարարտանյութ (գոմաղը) տալ։

6. Հողի նախապատրաստական աշխատանքներից մեկն ել հիմնա-
շրջված հողի մակերեսի հարթեցումն է։ Հիմնաշրջման հետևանքով հողի
մակերեսը խորհուրդով է լինում. այդ խորհուրդովությունները վերացնելու
նպատակով անհրաժեշտ են հատուկ թիերի միջոցով (տես նկ. 20) հողի
մակերեսը կանոնավոր հարթել։



Նկ. 20. Զիաքարը թի հողը հարթելու համար

Նախապատրաստական այս բոլոր աշխատանքները վերջացնելուց
հետո հողը միանգամայն պատրաստ է կտրոնները տնկելու համար։ Սա-
կայն, նախ քան տնկման տեխնիկայի մասին խոսելը, անհրաժեշտ ենք
համարում մի փոքր կանգ առնել, թե ինչ խորությունը և ինչ լայնու-
թյամբ պետք է կտրոնները տնկարանում տնկել։

4. ՏՆԿԵԼՈՒ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Միևնույն պայմաններում կտրոնները տնկարանում ընդհանրապես
պակաս խորությունը են տնկում, քան հիմնական տեղում, հետևյալ նկա-
տառովներով։

1. հնարավորություն են ստեղծվում արմատակալածները տնկարանից
հեշտությունը և առանց նրանց ստորերկրյա հանգույցները կտրելու, կարճաց-
նելու հանել ու հիմնական տեղը փոխադրել. մինչդեռ, յեթե կտրոնները
տնկարանում շատ խորն են (50 սմ. և ավելի) տնկում, արմատակալածների
հանելը շատ է դժվարանում և շատ հաճախ հանելու ընթացքում նրանց
թե արմատները և թե ստորերկրյա հանգույցները կտրվում են, կամ շատ
խոր վերքեր են ստանում, հետևաբար շատ խոր տնկելն անոգուտ մի աշ-
խատանք է հանդիսանում։

2. տնկելու համար համեմատաբար կարճ կտրոններ են պահանջվում
և այսպիսով տնկանյութը խնայողաբար է ոգտագործվում։

3. կտրոնների տնկելը, հանելը և մի շարք այլ աշխատանքներ զգալի
չափով հեշտանում են ու համեմատաբար քիչ ծախսեր են պահանջում։

Հյուսիսային խոնավ և համեմատաբար ցածր ջերմության պայման-
ներում, վորտեղ անգամ հիմնական տեղում կտրոնները (նաև արմատա-
կալածները) ընդհանրապես սաղր են տնկում, տնկարանում տնկելու խորու-
թյունը համարյա հավասար է լինում հիմնական տեղում տնկելու խորու-
թյանը։

Սակայն, վերև նշած փաստարկումները չպետք է չարը գործադրել և
աշխատել կտրոնները տնկարանում չափից դուրս սաղր տնկել։ Հաջող
արմատակալածներ ստանալու համար հարկավոր է տնկելու վորոշ խորու-
թյուն պաշտպանել Այդ խորությունը վորոշելու համար պետք է հաշվի
առնել տեղի կլիմայական և հողային պայմանները։ Հարավային չոր և
տաք շրջաններում կտրոնները համեմատաբար խորը պետք է տնկել (մոտ
35—45 սմ.), նրանց արմատակալման համար խոնավության նպաստավոր
պայմաններ ստեղծելու նպատակով։ Նույն այդ պայմաններում չոր, քաղա-
քակրթ և անջրդի հողերում, կտրոններն ավելի խորը պիտի տնկել, քան
համեմատաբար խոնավ կամ ջրարբի և պարարտ հողերում։ Ընդհանրապես,
հյուսիսային խոնավ և ցածր ջերմության պայմաններում, կտրոններն
ավելի սաղր են տնկում (մոտ 25—30 սմ.), վորպեսզի վերջիններս արմատ-
ները հողի վերևի շերտում լինեն և իրենց զարգացման համար բավարար
ջերմություն ստանան։ Խորության վորոշիչ է նաև այն հանգամանքը, թե
ինչ յերկարություն կտրոններ ունենք մի կողմից և մյուս կողմից՝ թե
ինչ հնարավորություն ունենք փոփոխակները ցանկացած քանակու-
թյամբ բազմացնել Յեթե փոփոխակն ընդհանրապես թույլ աճեցու-
ղություն ունի և նրա մատերը շատ կարճ են, ապա տնկման խորությունը
պիտի հարմարեցնել այդ փոփոխակի կտրոնների յերկարությանը
(տես եջ 16)։ Թանկարժեք վորեն փոփոխակ կարճ ժամանակամիջոցում
մեծ քանակությամբ բազմացնելու համար, կարճ կտրոններ են պատրաս-
տում, հետևաբար վերջիններս պակաս խորությունը են տնկում։

Հարցը կոնկրետացնելով մեր պայմաններին, կտրոնները տնկարա-
նում պիտի տնկել մոտ 35—40 սմ. խորությամբ։

Ինքնին հասկանալի չէ, զոր հիմնադրման խորութիւնը չի կտրող տընկման խորութիւնից պակաս լինել, ընդհակառակը, նա միշտ էլ պիտի ավելի լինի (առնվազն 5—10 սմ.):

5. ՏՆԿԵԼՈՒ ԽՏՈՒՅՈՒՆԸ

Տնկման խտութիւնն ասելով պիտի հասկանալ, թե կտրոնների շարքերը, ինչպես և այդ շարքերում կտրոններն իրարից ինչ հեռավորութեան վրա յեն գտնվում, կամ այլ խոսքով ասած հողի մեկ միավոր տարածութեան (որինակ հեկտար) վրա վորքան կտրոններ են տնկվում: Կտրոնները տնկարանում տնկելու խտութիւնը՝ կախված լինելով մի շարք պայմաններից, տատանվում է բավականի լայն սահմաններում:

Շարքերի մեջ յեղած հեռավորութիւնը (միջշարքային տարածութիւնը) առաջին հերթին կախված է տնկարանի հետագա մշակութեան ձևերից: Յեթե մշակութիւնը տարվիլու յե մեքենաների միջոցով, ապա շարքերն իրարից համեմատաբար պիտի հեռու դասավորել մոտ 70—80 սմ., անգամ 1 մետր, վոր կախված է մեքենաների և գործիքների տեսակից և նրանց մեծութիւնից, համեմայն դեպս 60 սմ. վոչ պակաս:

Ձեռքով մշակութեան դեպքում, շարքերը կարելի յե ավելի մոտ գցել, այն է մոտ 40—50 սմ.: Բացի դրանից, այս խնդրի լուծումը սերտ կախված է և նրանից, թե տվյալ շրջանում ազդիները թաղում են, թե վոչ: Այնտեղ, վորտեղ ազդիները ձմրան սառնամանիքներից պաշտպանելու համար թաղում են, և վորտեղ արմատակալածներն աշնանը տնկարանից չեն հանում և բնական է, վոր պիտի թաղեն, տնկարանի շարքերն ավելի հեռու պիտի դասավորված լինեն (0,8—1 մետր), վորպեսզի արմատակալածները տեղում թաղելու համար հնարավոր լինի շարքերի միջից բաժարար չափով հող վերցնել: Միջշարքային տարածութիւնը վորոշելուց հետո, տնկելուց առաջ, կամ հենց տնկելու ժամանակ, վանդակները բաժանում են շարքերի և վերջիններիս ծայրերում փոքր ցցեր են խփում: Այդ ցցերը ցույց են տալիս շարքերի յերկարութիւնը և նրանց ուղղութիւնը:

Շարքերում կտրոններն իրարից մոտ կամ հեռու տնկելը կախված է՝

1. հողի պայմաններից.—փութը, պարարտ, սննդանյութերով հարուստ հողերում կտրոններն իրարից ավելի հեռու պիտի տնկել, քան աղքատ և պինդ հողերում, վորտեղ կտրոնների աճեցողութեան համար պակաս նպաստավոր պայմաններ կան. ջրաբքի հողերում ավելի նոսր, քան չոր հողերում:

2. փոփոխակի աճեցողութիւնից.—միևնույն պայմաններում փութած աճող փոփոխակների կտրոններն ավելի նոսր պիտի տնկել, քան թույլ, աճեցողներին:

3. կտրոնների դրութիւնից և վիճակից.—լավ և կանոնավոր աճած կտրոններն ավելի նոսր պիտի տնկել, քան թույլ ու բարակ կտրոնները: Այն կտրոնները, վորոնք լավ չեն պահել, կամ հեռու տեղից են յեկել ու հանապարհին վորող չափով առժեկ են և կամ նրանց կպչելու մասին կասկած է առաջանում, սովորականից ավելի խիտ պիտի տնկել (տես էջ 32): Դժգոյութեամբ արմատակալող կտրոնները նմանապես խիտ պիտի տնկել: Համեմայն դեպս շարքերում կտրոնների մեջ թողնվելիք տարածութիւնը 5 սանտիմետրից պակաս և 15 սանտիմետրից ավելի չպիտի լինի. միջին թվով այդ տարածութիւնը 8—10 սմ. է կազմում: Մեր պայմաններում

տնկարանի շարքերը պիտի գցել իրարից մոտ 1 մետր հեռավորութեան վրա, վորպեսզի հնարավոր լինի արմատակալածները կանոնավոր թաղել: շարքերում կտրոնները կարելի յե տնկել իրարից 10 սմ. հեռավորութեան վրա:

Վորպեսզի պարզել, թե մեկ հեկտար տնկարան տնկելու համար վորքան կտրոն է հարկավոր, պիտի շարքերում կտրոնների մեջ թողնվելիք հեռավորութիւնը և միջշարքային տարածութիւնը արտահայտել մետրներով. ստացված թվերն իրար հետ բազմապատկել և ապա 10,000-ը (1 հեկտարը հալսար է 10,000 քառակուսի մետրի) բաժանել ստացված արտադրյալի (բազմապատկումից ստացված թիվը) վրա. քանորդը (բաժանումից ստացված թիվը) ցույց կտա, թե տնկման տվյալ խտութեան դեպքում վորքան կտրոն է պահանջվում մեկ հեկտար տնկարան տնկելու համար: Այսպես որինակ՝ յեթե շարքերը պիտի գցել իրարից 80 սմ. հեռավորութեան վրա, իսկ կտրոնները շարքերում պիտի տնկել 10 սմ. իրարից հեռու, ապա մեկ հեկտար տարածութեան վրա պիտի տնկել $0,8 \times 0,1 = 0,08$. 10000 : 0,08 = 125000 կտրոն: Այդ հաշիվները հեշտացնելու նպատակով, անհրաժեշտ ենք համարում բերել հետևյալ տախտակը, վորտեղ ցույց է տրված թե տարբեր խտութեան դեպքում, վորքան կտրոն է պահանջվում մեկ հեկտար տնկարան տնկելու համար:


Կտրոնների միջև թողնվելիք տարածութիւնը սանտիմետրերով	Միջշարքային տարածութիւնը սանտիմետրերով						
	40	50	60	70	80	90	100
	Պահանջվող կտրոնների քանակը մեկ հեկտար տնկարանի համար						
5	500,000	400,000	333,333	285,714	250,000	222,222	200,000
8	312,500	250,000	208,333	178,571	156,250	138,889	125,000
10	250,000	200,000	166,667	142,857	125,000	111,111	100,000
12	208,333	166,667	138,889	119,047	104,167	92,593	83,333
15	166,667	133,333	111,111	95,238	83,333	74,074	66,667
20	125,000	100,000	83,333	71,428	62,500	55,555	50,000

6. ՏՆԿԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Կտրոնները տնկարանում տնկում են՝ կամ առուններով, կամ յերկաթանիղների (լոմերի), զանազան ձևի ցցերի միջոցով և կամ հատուկ շամփուրներով:

ա). Առուններով ցնկելը: Տնկելու համար նախապատրաստած հողամասի վրա, ծրագրած շարքերի տեղերում լարի կամ թուղի ողնութեամբ բահերով բացում են 25—30 սմ. լայնութեամբ և տնկելու խորութեամբ առուններ: Կտրոններն առունների մեջ տեղավորում են միմյանցից սահմանված հեռավորութեան վրա (տես էջ 50), ուղղահայաց կամ քիչ թեք դրութեամբ, սակայն ուղնապես, վոր նրանք հենված լինեն առվի մեկ պատին և առվից դուրս յուրաքանչյուր կտրոն առնվազն 1-2 աչք ունենա: Կտրոնները տեղավորելու հետ միաժամանակ, առունները հողով լցնում են, վտաքերով լավ կոխքնում (սա կարևոր է, մտնականդ անջրդի պայմաններում) և հողից

գուրս 1—2 աչք պահելով, կտրոնների ավելորդ մասը սեկատորով կտրված ու հեռացնում են (տես նկ. 21)։ Տնկման աշխատանքները հիշատակելու և արագացնելու նպատակով, պետք է առաջի առուն տնկելու հետ միաժամանակ բացել յերկրորդ առուն, վորի հողով լցնել առաջին առուն։ յերկրորդ առուն տնկելիս, բացել յերրորդ առուն, վորից հանած հողը լցնել յերկրորդ առուն և այդպես շարունակ։ հողամասի վերջին առուն կարելի չէ լցնել այդ առվին մոտ ու հարմար տեղից վերցված հողով։ Վերջին ժամանակներս առուների փոխարեն հատուկ գութանների միջոցով խոբն ակոսներ են բացում, վորոնց մեջ կտրոնները նույն ձևով տնկում են և ապա գութանով տնկած ակոսը հողով լցնում։ Այս ձևով տնկելու աշխատանքներն անհամեմատ ավելի արագ են ընթանում և քիչ աշխատավոր ձեռք է պահանջվում, քան բահերով (ձեռքով) տնկելու դեպքում։




Նկ. 21. Կտրոնների առուներով տնկելը

բ). Տնկելը յերկաթանիզերի, ցցերի միջոցով։ Յերկաթանիզի կամ սուր ցցի հարվածով նշած տեղերում նեղ ու ցանկացած խորությամբ (նայած տնկելու խորությանը) անցքեր են բացում և յուրաքանչյուր անցքի մեջ մեկ կտրոն տեղավորում։ Այնուհետև նույն յերկաթանիզը կամ ցիցը խրում են հողի մեջ տնկած կտրոնից 5—10 սմ. հեռավորությամբ և թեք ուղղությամբ այն ձևով, վոր յերկաթանիզի կամ ցցի ծայրը մոտենա կտրոնի հիմքին։ ապա յերկաթանիզը կամ ցիցը սեղմում են դեպի կտրոնը, փակելով առաջին անցքը (վորի մեջ գտնվում է կտրոնը) այնպես, ինչպես ցույց է տված նկ. 22-ում։ Հողից դուրս 1—2 աչք պահելով, կտրոնի ավելորդ մասը հեռացնում են։ Տնկելու այս ձևը կարելի չէ կիրառել միայն համեմատաբար պինդ կավահողերում։ փուխը ավազահողերում բացած անցքը, յերկաթանիզը կամ ցիցը անցքից հանելուն պես հողով լցվում է, վորով և տնկելու պրոցեսն զգալի չափով դժվարանում է։


գ). Շամփուրմետով տնկելը։ Տնկելու այս ձևը կայանում է նրանում, վոր յերկաթե հատուկ շամփուրի յեղանակաձև ճյուղավորված մասով բռնում են կտրոնի հիմքը և նշած տեղում ցանկացած խորությամբ նույն այդ շամփուրով կտրոնը խրում են հողի մեջ, հողից դուրս թողնելով առնվազն 1—2 աչք. այնուհետև մեկ ձեռքով կտրոնի ծայրը բռնելով, մյուս ձեռքով հողից շամփուրն զգուշությամբ հանում են այնպես, վոր կտրոնը տեղահան չլինի և պահանջված խորության վրա գտնվի, վորից հետո նույն շամփուրով հողը տալիս են կտրոնին (նկ. 22)։ Տնկելու այս ձևը կիրառում են գլխավորապես փուխը ավազահողերում։ պինդ, ինչպես և քարքարոտ հողերում շամփուրով տնկելը նախ՝ բավականին դժվար է և յերկրորդ՝ կտրոնները

տնկելու ժամանակ հեշտությամբ շարվում են կամ վերադրվում։ Այս ձևը կիրառվում է նաև մեղ մոտ կտրոնները հիմնական տեղում և թե տնկարանում տնկելու ժամանակ (խորհ. III և I-ին տնտեսություններում և այլն)։ Վտուրվող պայմաններում կտրոնները տնկելուց հետո պետք է ջրել։



Նկ. 22. Կտրոնների տնկելը շամփուրի միջոցով


Ինչ ձևով էլ կտրոնները տնկելու լինենք, միևնույն է, արջրդի պայմաններում պետք է տնկած կտրոնները վերևից մի 3—4 սմ. հողով ծածկել, կամ ինչպես ասում են բուհ տալ, վորպեսզի կտրոնի հողից դուրս գտնված



Նկ. 23. Կտրոնների բուհ տալը տնկարանում

մասը ավելորդ ջուր չգործընթացի և դրանից կտրոնը չչորանա (տես նկ. 23)։ Վտուրվող շրջաններում տնկարանը ջրելու համար անհրաժեշտ է շարքերին մոտ և նրանց զուգահեռ փոքր թմբեր պատրաստել, բուհ տալն այս դեպքում ավելորդ է։ Բուհ տալու և թմբեր պատրաստելու աշխատանքները հեշտությամբ ու արագ կերպով կարելի չէ կատարել հատուկ տրակտորներով (որինակ՝ Վիդալի), վորոնց պիտի կցել բուհից խոփելով կուլտիվատորներ (տես նկ. 24)։

Փոփոխականներն առանձին պետք է տնկել և վոչ մի դեպքում տարբեր փոփոխականների կտրոններ իրար չխառնել։



Նկ. 24. Կոլտիվատոր բուկից խոփերով

7. ՏՆԿԱՐԱՆԻ ԽՆԱՄՔԸ

Կտրոնների կաշիները և հաջող զարգանալու համար անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տնկարանի խնամքի վրա, վորովհետև կանոնավոր լիկ հիշեց ժամանակին կոտորած խնամքը սնկառանի հաջողությունը ամենալավ գրավակալն է: Հիշումը, թերի կամ ժամանակին չկատարած խնամքը հեշտությամբ կարող է կտրոնների չորանալու պատճառ դառնալ: Ահա թե ինչու անհրաժեշտ է մշտական հսկողություն ունենալ տնկարանում կտրոնների աճող վեգետացիոն շրջանում:

Տնկարանի խնամքը կայանում է հետևյալում՝

1. վորովհետև պայմաններում տնկարանը պետք է ժամանակին և կանոնավոր ջրել, խույս տալով ջրելի ի չարը գործադրելու, մանավանդ ամառվա յերկրորդ կիսին և աշնան ամիսներին, յերբ շատ ջրելու հետևանքով, տնկիները լավ չեն փայտանում, շիվերը կանաչ են մնում: Բացի դրանից, կտրոններն անգամ կարող են նեխել: Սակայն և ջրի պակասության հետևանքով կտրոնները հեշտությամբ չորանում են և չեն արմատակալում: այս առնականից տնկարանը պիտի ջրել կարիք յեղած դեպքում: Ջրելու քանակը կախված է հողային և կլիմայական պայմաններից: Կան տեղեր, վորտեղ 1—2 անգամ են ջրում, կան և տեղեր, վորտեղ 10—15 անգամ: Մեզ մոտ 8—10 անգամ է հարկավոր ջրել, իսկ վորոշ տեղերում՝ 10—15 անգամ:

2. տնկարանի հողը պետք է փրորուն վրձակում պահել, վորպեսզի, նախ՝ հողից շատ ջուր չզորոշանա և յերկրորդ՝ ողը հողի մեջ հեշտությամբ թափանցի: Ջրելուց և թե անձրևներից հետո հողի յերեսը պնդանում է և հեշտությամբ կեղևակալում: Անհրաժեշտ է կուլտիվատորներով, կամ զրանց բացակայության դեպքում ձեռքի գործիքներով, միջարքային տարածությունները հարկ յեղած դեպքում կանոնավոր փրորեցնել (սեզոնի ընթացքում 4—6 անգամ): պետք է ձեռքով զգուշությամբ փրորեցնել և կտրոնների միջև յեղած տարածությունը: պետք է զգուշ լինել, վորպեսզի փրորեցման ժամանակ կտրոնների շիվերը չքայտվեն, չպոկվեն:

3. տնկարանում մոլախոտերը պետք է վոչնչացնել և հողը միշտ մաքուր վրձակում պահել:

4. ժամանակին պայքար մղել տնկարանը սնկային հիվանդություններից և ֆլասատու միջատներից զերծ պահելու համար: Հաճախ կտրոնների մատղաշ տերևները և շիվերը վարակվում են միլդու (չոռ) կոչված սնկային հիվանդությամբ: անհրաժեշտ է այդ հիվանդության դեմ սեզոնի ընթացքում տնկարանը մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով մեկ-յերկու անգամ սրսկել: Այն շրջաններում, վորտեղ ուրիշում (սև) հիվանդությունը հաճախ է պատահում, տնկարանը 1—2 անգամ (յերբեմն ավելի շատ) ծծումբով պիտի փոշոտել: Մրսկելը և թե փոշոտումը կարելի չէ կատարել մատորավոր մեքենաներով, վորոնք ձեռքի ապարատների և ծծմբահար փուքսերի հետ համեմատած, անհամեմատ ավելի արագ են աշխատում, քիչ ծախսեր ու աշխատավոր ձեռքեր են պահանջում:

5. բուկ տված տնկարաններում ամառն յերկրորդ կիսին անհրաժեշտ է հետ տալ կտրոնները ծածկող հողը, վորպեսզի շիվերի հիմքերը կանոնավոր փայտանան:

6. ամառվա յերկրորդ կիսին կամ աշնանը (նախ քան տերևաթափը) անհրաժեշտ է պիտակավորել այն տնկիները, վորոնք տվյալ հողամասում կամ շարքում խառնուրդ են կազմում, վորպեսզի տնկիները հանելու ժամանակ դրանք դատել և հիմնական տեղում ցանկացած փոփոխականի տնկիները միայն տնկել (տես եջ 21):

7. այնտեղ, վորտեղ այգիները թաղում են, կամ յիթե չեն թաղում, բայց ձմռան սառնամանիքները համեմատաբար խիստ են լինում և յիթե տնկարանից տնկիներն աշնանը չեն հանում և նրանք տնկարանում պիտի ձմռեն, տնկարանը տերևաթափի ժամանակ, մոտավորապես հոկտեմբերի վերջերին, իսկ մեղ մոտ նոյեմբեր ամսի առաջին կիսին պիտի կանոնավոր թաղել՝ ձմռան սառնամանիքներից ազատելու նպատակով:

Ահա թե ինչ աշխատանքներ պիտի կատարել տնկարանում: Կանոնավոր խնամքի և բարենպաստ պայմանների (հող, կլիմա, կտրոններ և այլն) դեպքում տնկած կտրոնների մոտ 90% (անգամ ավելին) կաշում է, ու հաջող կերպով զարգանում: նրանց շիվերը մոտ 0,8—1 մետր, անգամ ավելի յերկարության են հասնում (տես եջ 15 նկ. 10)

8. ՏՆԿԻՆԵՐԻ ՀԱՆՅԸ, ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼՆ ՈՒ ՊԱՇԵԸ

Տնկարանից տնկիները հանում են նույն աշնանը, կամ հաջորդ զարնանը, հազվադեպ դեպքում միայն, այն ել, յերբ տնկիները շատ թույլ են զարգացած լինում, վերջիններս թողնում են տնկարանում ևս մեկ վեգետացիոն շրջան: Աշնան հանելն ունի մի շարք առավելություններ: նախ՝ տնկարանը շուտ է ազատվում, վորով հնարավորություն ենք ստանում հենց աշնանից տնկարանում հաջորդ տարվա համար նախապատրաստական աշխատանքներ տանել, յերկրորդ՝ թեթևանում են գարնան տնկման կամպանիայի աշխատանքները, յերրորդ՝ հնարավորություն ենք ունենում տնկիները հարկ յեղած դեպքում ժամանակին հեռավոր վայրեր ուղարկել: Ինքնին հասկանալի չէ, վոր յիթե տնկանությունն այգիներ պիտի տնկի նաև աշնանը, ապա անկախ թված առավելություններից, տնկիները հանում են

աշխատելու: Տնկիւնների աշխատանքը հանելը պետք է սկսել այն ժամանակ, յերբ նրանց տերեւների մեծ մասը թափվել է, և վերջացնել ձմռան սառնամանիք-



Նկ. 25. Տնկիւնների խաւք

ված տնկիւններից խրճեր են կազմում (յուրաքանչյուրի մեջ 100 հատ) այնպես, ինչպես ցույց է տրված Նկ. 25-ում: Այդ խրճերը մինչև հիմնական տեղում տնկելը կամ մի այլ վայր ուղարկելը, անհրաժեշտ է կանոնավոր պահել, վերն արվում է նույն ձևով, ինչպես կտրոնների պահելը և ուղարկելը (տես նշ 32 և 26):

Տնկիւնները հանում են ձեռքով (բահերով), կամ հասուկ գութաններով: Վերջին դեպքում աշխատանքներն անհամեմատ արագ են կատարվում և քիչ աշխատավոր ձեռք է պահանջվում: Հանած կտրոնները դարձում են ըստ փոփոխակների, տնկիւնները մեկ առ մեկ ուղարկվում են նայում և նրանցից հիվանդները, վնասվածները, շատ թույլ շիվեր ու արմատական սխտեմ ունեցողները խոտանում են: Ուժեղ տնկիւնները, վորոնց շիվերը կանոնավոր փայտացած են (հիմքից առնվազն 10 սմ. յերկարությամբ), ինչպես արմատները լավ դարձացած, դարձում են առանձին և նրանք ոգտագործում հիմնական տեղում տնկելու համար: Համեմատաբար թույլ տնկիւնները նպատակահարմար է նորից տնկարանում տնկել և մեկ վեգետացիոն շրջանից հետո միայն հիմնական տեղը փոխադրել: Տեսակավորման ժամանակ տնկիւնների շիվերն ու արմատները ծայրերից մի փոքր կտրում են: Տեսակավոր-

ված տնկիւններից խրճեր են կազմում (յուրաքանչյուրի մեջ 100 հատ) այնպես, ինչպես ցույց է տրված Նկ. 25-ում: Այդ խրճերը մինչև հիմնական տեղում տնկելը կամ մի այլ վայր ուղարկելը, անհրաժեշտ է կանոնավոր պահել, վերն արվում է նույն ձևով, ինչպես կտրոնների պահելը և ուղարկելը (տես նշ 32 և 26):



«Ազգային գրադարան»



NL0293627

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

19.484



Б. АСЛАНЯН

РАЗМНОЖЕНИЕ ВИНОГ РАДНЫХ ЛОЗ ЧУБУКАМИ

СЕЛЬХОЗГИЗ

1934

ЭРИВАНЬ